Հերբարիումներ

Մուլաժներ

Լուսային մանրադիտակ

Ժամանակակից լուսային մանրադիտակ

„ՄԻՆԻ՝լաբորատորիա

ՌԻՍԿԵՐ

1. ԲՏՃՄ բնագավառի բնագիտական նկատմամբ անտարբերություն
2. Ոչ բավարար ֆինանսական միջոցներ

Ռիսկերը մեղմացնող և չեզոքացող գործողություններ


1. Վիրտուալ լաբորատորիաներից օգտվել մինչև հազեցած լաբորատորիայի ներդրումը
2. Սովորողների միջոցով ստեղծել դիդակտիկ նյութեր/ԴՆԹ-ի մոդել, բջջի մոդել/

Ուժեղ կողմեր

1. Կաբինետը կահավորված է
2. Վերանորոգված է
3. Ունենք ժամանակակից լուսային մանրադիտակ
4. Ունենք կենսաբանության „ՄԻՆԻ“ լաբորատորիա

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1. Չունենք ժամանակակից հազեցած բնագիտական լաբորատորիա
2. Դիդակտիկ նյութերի պակաս





ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ „ԱՄԵՐԻԿԱՆ ԱՆՅՈՒՆ” ԿԱԲԻՆԵՏԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

N	Գույքի անվանումը	Տվյալները
1.	Համակարգիչ/կոմպլեկտ	3 հատ
2.	Գրատախտակ	1 հատ
3.	Մարկերային գրատախտակ 2 արժական	1 հատ
4.	Հեռուստացույց	1 հատ
5.	Անգլերեն գրականություն	400 հատ
6.	Դրոշներ	2 հատ
7.	Պրինտեր	1 հատ

ՌԻՍԿԵՐ

1. Դժվարություններ են առաջանում համացանցի չլիներլու պատճառում



ՌԻՍԿԵՐԸ ՄԵԴՄԱՑՆՈՂ և չԵԳՈՔԱՑՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխատում ենք կրիչներով մինչև տիրույթը կընդարձակվի



ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

1. Կաթինետը կահավորված է
2. Վերանորոգված է
3. Ճառայում է նաև որպես ընթերցասրահ
4. Գույքը հարմար է ինտերակտիվ դասերի, կինոդիտումների, հանդիպումների, սեմինարների կազմակերպման համար
5. Անգլալեզու գրականություն



ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1. Համացանցին միացված չէ



ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԿԵՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

N	Գույքի անվանումը	Տվյալները
1.	Տապչան	1 հատ
2.	Սառնարան	1 հատ
3.	Լ վ ա ց ա ր ա ն	1 հատ
4.	Կշեռք էլեկտրոնային	1 հատ
5.	Պահարան	1 հատ
6.	Աղբաման	2 հատ
7.	Բուժօգնության արկղ	1հատ

ՌԻՍԿԵՐ

1. Դեղորայքի պահպանման կանոնների խախտում
2. Դեղորայքի արագ սպառում

Ուժեղ ԿՈՐՄԵՐ

1. Կաբինետը կահավորված է
2. Վերանորոգված է
3. Ունի առանձնացված տարածք
4. Ունենք առանձին խցիկ-մեկուսարան
5. Բուժօգնության համալիր արկղ

ԹՈՒՅԼ ԿՈՐՄԵՐ

1. Չունենք հասակաչափ
2. Քիչ են դեղամիջոցները
3. Չունենք դեղորայքի պահարան

Ռիսկերը մեղմացնող և չեզոքացող գործողություններ

1. Համալրել ԱՆ 28 մարտի 2017 N12 հրամանի հավելված 2-ի դեղերի չափով
2. Այրևտրանքային հասկաչափ օգտագործել
3. Ձեռք բերել դեղորայքի պահարան



ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

N	Գույքի անվանումը	Տվյալները
1.	Կահույք խոհանոցի	1 կոմպլեկտ
2.	ճաշասեղան աշակերտական/կոմպլեկտ	30 կոմպլեկտ
3.	Օդազտիչ	1 հատ
4.	Գազօջախ	2 հատ
5.	Սառնարան,սառցարան	5 հատ
6.	Լվացքի մեքենա	1 հատ
7.	Էլեկտրական վառարան	2 հատ
8.	Չժանգոտվող մետաղից սեղան	5 հատ
9.	Խմորի ու լց	1 հատ
10.	Չժանգոտվող մետաղից դարակաշար	3 հատ
11.	Շարժական մատուցարան	2 հատ
12.	Էլեկտրական ջրատաքացուցիչ	3 հատ
13.	Լվացարան	6 հատ
14.	Կշեռք	2 հատ
15.	Սպասք	200 հատ

ՌԻՍԿԵՐ

1. ԱՆ N 32-Ն հրամանով սահմանված նորմերի խախտում
2. Վարակիչ հիվանդությունների վտանգ

Ռիսկերը մեղմացնող և
չեզոքացող
գործողություններ
1. Պարբերաբար հսկել և
համագործակցել
պատասխանատուի և
բուժքրոջ հետ

Ուժեղ ԿՈՂՄԵՐ

1. Ճաշարանը կահավորված է
2. Վերանորոգված է
3. Գույքը ամբողջությամբ նոր
4. Ունենք արտակարգ իրավիճակներում գործելու հնարավորություններ
5. Տաք ու սառը ջուր
6. Ունենք լվացարաններ

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1. Չունենք ձեռքեր չորացնելու սարք

1.2 Հաստատության նյութատեխնիկական բազա /ամփոփ եզրակացություն/

2018-2023 տարիների ընթացքում ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան անընդհատ համալրվել է.

1. Ձեռք ենք բերել սպորտային գույք՝ ինչպես հիմնական , այնպես էլ տարրական դասարանների սովորողների համար, ձեռք բերված սպորտային գույքը հնարավորություններ է ստեղծել, ոչ միայն արդյունավետ կազմակերպել ֆիզկուլտուրայի դասաժամերը, այլև հանդես գալ սպորտային միջոցառումներում և գրավել տարբեր մրցանակային տեղեր

2. Աշակերտների թվաքանակի շատացմամբ պայմանավորված ձեռք ենք բերել երկու դասարանի աշակերտական գույք

3. Դասապրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու, նոր ՀՊԶ-ով պայմանավորված, ՏՀՏ դասերը կազմակերպելու, ՏՀՏ հմտությունները զարգացնելու, 2-րդ 5-րդ և 7-րդ դասարաններում թվային գրագիտություն առարկայի ներդրմամբ պայմանավորված ձեռք ենք բերել 10 համակարգիչ, 8 դյուրակիր համակարգիչ, 4 պրոեկտոր, 6 մարկերային գրատախտակ:

4. Բնագիտական առարկաների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ձեռք ենք բերել ժամանակակից լուսային մանրադիտակ, „ՄԻՆԻ“ լաբորատորիա, քիմիական նյութեր, մաթեմատիկական չափման գործիքներ և այլն:

5. Ներդրել ենք ժամանակակից „ԱՐՄԱԹ“ ճարտարագիտական աշխատանոց, որը լինելով ոչ ֆորմալ տեխնոլոգիական հայկական ազգային կրթական ծրագիր, միտված է վաղ տարիքից հասանելի դարձնել ճարտարագիտական ուսուցումը և ուժեղացնել դպրոցականների բնագիտական առարկաների դասավանդման գիտելիքները

6. Կահավորել ենք մանկավարժահոգեբանական աջակցության կաբինետը՝ ապահովելով համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայր, որը յուրաքանչյուր աշակերտի համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առաձնահատկություններից բխող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները:

7. Կառուցել ենք բացօթյա համալիր մարզադաշտ՝ նպատակ ունենալով ամրապնդել սովորողների ֆիզիկական ակտիվությունը, աճի, զարգացման, հիգիենայի, հոգեկան և ֆիզիկական առողջության պահպանումը: Ինչը հնարավորություն կտա գնահատել իր և այլոց առողջությունը՝ որպես կարևոր արժեք:

Այնուհանդերձ դպրոցի նյութատեխնիկական բազան ունի համալրման խնդիր. էլեկտրոնային մատյանների կիրառման, ՏՀՏ դասերի , նոր ՀՊԶ-ի ներդրմամբ, բնագիտական առարկաների դերի մեծացման, ներառականության, անվտանգության նկատառումներից ելնելով

անհրաժեշտություն է առաջանում **համալրել դասասենյակները ՏՀՏ սարքավորումներով, հագեցնել կամ հիմնել բնագիտական լաբորատորիաներ, ձեռք բերել դիդակտիկ նյութեր, ռեսուրսներ** և այլն:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ/ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ/

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1.Դպրոցը հիմնանորոգված է	1. Դպրոցի դասասենյակները ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք
2.Դպրոցը ունի կաթսայատուն՝ լոկալ ջեռուցում, շուրջօրյա ջրամատակարարում, հեռախոսային և ինտերնետային անվճար կապ,կոյուղացում	2.Դասասենյակների մակերեսը՝ մեկ սովորողի հաշվարկով,նորմայից քիչ է 0,1-ով
3.Բոլոր հարկերում կան սանհանգույցներ նախատեսված տղաների և աղջիկների համար	3.Չունենք երկրորդ մարզադահլիճ
4.Միջանցքներում և համակարգչային դասարաններում տեղադրված են տեսախցիկներ՝տեսահսկման նպատակով	4. Բոլոր դասասենյակները ՏՀՏ սարքավորումներով հագեցած չեն
5.Դպրոցի տարածքը բարեկարգ է,սահմանազատված ցանկապատով	5. Քիմիայի,կենսաբանության,ֆիզիկայի լաբորատորիաները չեն համապատասխանում ժամանակակից չափանիշներին
6.Դպրոցի մուտքի մոտ ունենք թեքահարթակ	6. ԿԱՊԿՈՒ աշակերտների համար չունենք խելամիտ հարմարեցումներ/ թեքահարթակ սանհանգույցում,աստիճաններին և այլն/
7.Դպրոցի երեք հարկերում կան հանգստի սենյակներ՝ կահույքով և տաք ջրով	7. Չունենք ջերմատուն,այգի դպրոցամերձ տարածքում
8. Դպրոցն ունի կապի և անվտանգության ազդարարման համակարգ	8. Չունենք արևային կայաններ
9. Բոլոր աշխատասենյակները կահավորված են գույքով՝ համակարգիչներ,տպիչ սարքեր և այլն	9. Չունենք վիրտուալ հրաձգարան
10.Դպրոցի շենքը ոչ տիպային է՝ հարմարեցված	10. Չունենք լինգաֆոնային դասարան
11.Դպրոցը համալրված է հակահրդեհային միջոցներով	11. Հանդիսությունների դահլիճի գույքը հին է
12.Դպրոցի գույքը համապատասխանում է անվտանգության կենսագործունեության պահանջներին	
13.Դպրոցի նախասրահում,միջանցքներում,փակցված են տարիանման պլան-սխեմաները	
14.Սովորողների թիվը համապատասխանում է նախագծային հզորությանը և լիցենզիայով նախատեսված տեղերին	
15.Դասարաններում սեղանների դասավորվածությունը համապատասխանում է սահմանված նորմերին	
16.Ֆիզկուլտուրայի դասերը անցկացվում են վերանորոգված մարզադահլիճում,նորակառույց մարզադաշտում և հարմարեցված մարզադահլիճ-միջանցքում	
17. Դպրոցական սնունդ ծրագրի շրջանակներում ունենք կահավորված,վերանորոգված,տաք և սառը շուրջօրյա ջրամատակարարմամբ ճաշարան	

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
18.Ունենք բուժկետ և մեկուսարան	
19.Ժամանակակից „ԱՐՄԱԹ” լաբորատորիա	
20.ՏՀՏ սարքավորումներով հագեցած երեք դասասենյակներ	
21. Համակարգչային երկեւ կաբինետ	
22. Ունենք երկու ընթերցարան	
23. Հոգեբանի և մանկավարժահոգեբանական աջակցության կաբինետներ	
24. Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր	
25. Միջանցքների հատակները սայթաքուն չեն,վերջիններս ծածկված չեն ուղեգորգերով:	
26. Տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:	
27. Բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:	

1. ՈԼՈՐՏԸ ` ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

ՆՊԱՏԱԿԸ` Ստեղծել օպտիմալ կրթական միջավայր, որն ապահովում է մատչելի և որակյալ կրթություն

Նյութատեխնիկական բազայի բարելավման և հաստատությունում անվտանգ պայմանների ապահովում
ԽՆԴԻՐՆԵՐԸ`

- 1. Ստեղծել օպտիմալ պայմաններ կրթական կարիքները բավարարելու, սովորողների համընդհանուր զարգացման և ինքնազարգացման համար` իրենց անհատական կարողությունների, անձնական որակների, գիտելիքների և կարողությունների ամբողջության մեջ
- 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում կրթական գործընթացում (Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում, դպրոցի համակարգչային բազայի համակարգված թարմացում):
- 3.Նյութատեխնիկական բազայի համալրում

- ՌԻՍԿԵՐԸ`**
- 1. Ֆինանսական խնդիրների առաջացում պայմանավորված դասարանների թվաքանակի նվազմամբ
 - 2. Պահպանման ծախսերի կտրուկ աճ պայմանավորված արտակարգ իրավիճակներով

- ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՆԿԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ`**
- 1.Ֆինանսական տարին սկսելուն զուգընթաց կանխատեսել նոր ուսումնական տարվա դասարանների ձևավորման հնարավոր փոփոխությունները
 - 3.Կատարել խելամիտ ֆինանսական ծախսեր և տնտեսումներ/արևային կայաններ/
 - 4. Պետական միջոցներով ֆինանսավորմանը զուգընթաց օրենքով չարգելված ֆինանսական միջոցների հայթայթում

Սահմանված Նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
1.Դպրոցի առաջին մասնաշենքի դասարանների,միջանցքների ընթացիկ վերանորոգում	Վարչատնտեսական համակարգող,հաշվապահ,գնումների համակարգող,տնտեսվար	2024-2025 4-րդ հարկ 2025-2026 3-րդ հարկ 2026-2027 2-րդ հարկ 2027-2028 1-ին հարկ	շինարարական նյութեր և գործիքներ,աշխատուժ	Պետական բյուջե	Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ

Սահմանված Նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
2. Գրադարանի արդիականացում	Վարչատնտեսական համակարգող,հաշվապահ,գնումների համակարգող,տնտեսվար	2025 հուլիս-օգոստոս	շինարարական նյութեր և գործիքներ, եվրոպական արտադրության պատուհաններ,դռներ,	Պետական բյուջե և դրամաշնորհներ	Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ
3. Հանդիսությունների դահլիճի գույքի ձեռք բերում	Վարչատնտեսական համակարգող,հաշվապահ,գնումների համակարգող,տնտեսվար	2024 մայիս	Նստարաններ, վարագույրներ/	Պետական բյուջե	Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ
4.Ֆիզիկայի,քիմիայի և կենսաբանության/երեքը մեկում/ լաբորատորիայի ստեղծում	Համակարգող,հաշվապահ,գնումների համակարգող,տնտեսվար, "LabScientific" լաբորատորիա	2025 դասասենյակի վերանորոգում 2026 նյութատեխնիկական բազայի համալրում	Նախագիծ,քիմիայի, կենսաբանության , ֆիզիկայի նյութեր, շինանյութեր	Պետական բյուջե և շինանյութեր	Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ
5.ՏՀՏ սարքավորումներով դասասենյակների հագեցում	Համակարգող,հաշվապահ,գնումների համակարգող,տնտեսվար, դասղեկներ	2024 երեք դասարան 2025 երեք դասարան 2026 երեք դասարան 2027 երեք դասարան 2028 երեք դասարան	12 համակարգիչ, 12 պրոեկտոր, 12 մարկերային գրատախտակ 10 դյուրակիր համակարգիչ	Պետական բյուջե	Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ
6.Խելամիտ հարմարեցումներ	Համակարգող,հաշվապահ,գնումների համակարգող,տնտեսվար,ուսուցչի օգնականներ	2024 1-ին հարկի սանհանգույց 2025 մայիս	թեքահարթակ սանհանգույցում հարմարեցված սանդուղք	Խելամիտ հարմարեցումների համար հատկացված պետական միջոցներից	Լիազոր մարմին,Կառավարման խորհուրդ
7.Տեսախցիկների տեղադրում մուտքի մոտ	Համակարգող,հաշվապահ,գնումների համակարգող,տնտեսվար	2024 մայիս	տեսախցիկներ	Պետական բյուջե	Լիազոր մարմին, Կառավարման խորհուրդ
8.Վիրտուալ իրաճգարանի հիմնում	Համակարգող,հաշվապահ,գնումների համակարգող,տնտեսվար,զինղեկ	2024 սեպտեմբեր	թիրախներ,ուսումնական զենքեր,համակարգիչ	Պետական բյուջե,օրենքով չարգելված այլ միջոցներ	Լիազոր մարմին, Կառավարման խորհուրդ

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

Հանրակրթության կառավարման համակարգը և ոլորտը կարգավորող օրենսդրությունը

.ՀՀ Սահմանադրությամբ **ՀՀ Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն** է (հոդված 146) և նրա իրավասությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:

.Կրթության ոլորտի պետական լիազոր մարմինը **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն** է «**Կրթության մասին**» **ՀՀ օրենք/ հոդված 36/**

Կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը **Հայաստանի Հանրապետության կառավարությունը`**

- 1) ապահովում է պետական կրթական քաղաքականության իրականացումը.
- 2) հաստատում է պետական կրթական չափորոշիչները եւ դրանց ձեւավորման կարգը.
- 3) հաստատում է ուսուցանվող մասնագիտությունների ցանկը.
- 4) հաստատում է հանրակրթական, միջին մասնագիտական եւ բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը.
- 5) հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները.
- 6) հաստատում է պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձեւերը.
- 7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ

Հոդված 38. Հանրակրթության բնագավառում մարզպետի իրավասությունը **Մարզպետը`**

- 1) ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը.
- 2) վերահսկում է նախադպրոցական եւ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, ապահովում է կրթական եւ դաստիարակչական ծրագրերի իրականացումը` պետական կրթական չափորոշիչներին համապատասխան.
- 3) համակարգում եւ վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում.
- 4) ապահովում է ուսումնական հաստատությունների շենքերի կառուցումը, շահագործումը եւ պահպանումը.
- 5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններ:

Հանրակրթության բնագավառում **Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն** են՝ հանրակրթության բնագավառում իրականացնում է պետական քաղաքականության իրականացումը, հանրակրթության պետական չափորոշիչի ձեւավորման եւ հաստատման կարգը, հանրակրթության պետական չափորոշիչի հաստատումը, ուսումնական հաստատությունների հիմնադրումը, ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունների հաստատումը, պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության հաստատման կարգը, պետական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը:

Հանրակրթության բնագավառում **կրթության պետական կառավարման լիազորված** մարմնի իրավասություններն են հանրակրթական պետական ծրագրերի մշակումը և հաստատումը, հանրակրթական այլընտրանքային, այդ թվում՝ փորձարարական, հեղինակային եւ միջազգային հիմնական ծրագրերը, հանրակրթական ծրագրերի իրականացման լիցենզիաների տրամադրումը, պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեւավորման կարգի սահմանումը, փորձագիտական եզրակացություն է տալիս պետական ուսումնական հաստատության տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ, մշակում եւ հաստատում է ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը, սահմանում է մանկավարժական աշխատողների եւ տնօրենի վերապատրաստման բովանդակությանը ներկայացվող պահանջները, համաձայնություն է տալիս ուսուցիչների վերապատրաստման ծրագրերին, իրականացնում է ուսումնական հաստատությունների վերահսկողություն և այլն:

Հանրակրթության բնագավառում **տարածքային կառավարման մարմնի** եւ Երեւանի քաղաքապետի իրավասություններից են ապահովել է մարզի տարածքում (Երեւան քաղաքում) պետական կրթական քաղաքականության իրականացումը, վերահսկել ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական ծրագրերի իրականացումը՝ հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան և այլն:

Ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության կառավարումն իրականացնում է ուսումնական հաստատության **գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը/այսուհետև համակարգող ՀՀ կառավարության 2023 փետրվարի 16 N 216-Ն որոշում:**

ՊՈԱԿ-ների մասին օրենքի և ԿԳՄՍ նախարարի 2021թ մարտի 15-ի N 25-Ն հրամանի համաձայն կարգի հաստատության կոլեգիալ կառավարման մարմինն է՝ կառավարման խորհուրդը:

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի/ համաձայն.

1. Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմական դպրոցի կառավարման խորհուրդը ձևավորվել է 2021 թվականին 3 տարի ժամկետով

2. Իբրև առանձին հաստատության խորհուրդ

3. Հաստատության խորհուրդը կազմված է 9 անդամից

4. Խորհրդի անդամներին առաջադրում են.


1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարը՝ 1 անդամ

2. Լիազորված մարմինը՝ 3 անդամ

3. Մանկավարժական խորհուրդը՝ 2 անդամ

4. Ծնողական խորհուրդը՝ 2 անդամ

5. Տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը՝ 1 անդամ



Դպրոցի խորհուրդը՝

- 1) աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն:
- 2) հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:
- 3) հաստատում է նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատված՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա տնօրենի կողմից մշակված՝ դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը:
- 4) քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները:
- 5) քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները:
- 6) լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան:
- 7) հաստատում է իր աշխատակարգը, նիստերի օրակարգը, ժամանակացույցը և ընտրում խորհրդի նախագահ և քարտուղար:
- 8) սույն կետի 1-ին ենթակետի համաձայն տրված եզրակացության հիման վրա խորհրդի անդամների (միացյալ խորհրդի դեպքում՝ միայն տվյալ հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների և տվյալ համայնքի ղեկավարի կողմից) ընդհանուր թվի երկու երրորդի համաձայնությամբ, հիմք ընդունելով լիազոր մարմնի սահմանած կատարողական ցուցանիշներն ու պահանջները, կարող է անվստահություն հայտնել տնօրենին և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին առաջարկությամբ դիմել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին՝ կից ներկայացնելով լիազորությունները դադարեցնելու անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկներ:
- 9) իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:

Դպրոցի տնօրենը՝

- 1.մասնակցում է խորհրդի նիստերին ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
- 2.խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ֆինանսատնտեսական ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը,արտաքին և ներքին գնահատման արդյունքները,հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման հայտը
- 3.խորհրդի հավանությանն է ներկայացնում տարիֆիկացիան,հաստիքային ցուցակն ուամենամյա ծախսերի նախագիծը,կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը
- 4.պատրաստում և խորհուրդ է ներկայացնում բյուջեի կատարման մասին կիսամյակային և տարեկան հաշվետվությունները
- 5.խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը
6. խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը:
7. ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԶՄԵՆ Ա-Ի ԱՆՎԱՆ

N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ


ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

- Պետական ուսումնական հաստատության կառավարման կոլեգիալ մարմինը՝ խորհուրդը/այսուհետ՝ խորհուրդ/ <<Հանրակրթության մասին >> օրենքով և <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությամբ սահմանված իր լիազորություններն իրականացնելիս գործում է սույն աշխատակարգին/այսուհետ՝ աշխատակարգ/ համապատասխան՝ նիստերի,ինչպես նաև խորհրդի անդամների ընթացիկ աշխատանքների միջոցով:
- խորհրդի հերթական նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ՝ ըստ խորհրդի կողմից հաստատված ժամանակացույցի
- Արտահերթ նիստերը գումարվում են խորհրդի նախագահի,լիազորված մարմնի,հաստատության տնօրենի,խորհրդի անդամների 1/3-ի պահանջով, նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետով և օրակարգով:
- խորհրդի նիստերը ղեկավարում է խորհրդի նախագահը:խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի որոշմամբ նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:
- խորհրդի նիստերը արձանագրվում են խորհրդի նախագահի կամ նրա կողմից առաջադրված և ձայների պարզ մեծամասնությամբ ընտրված /քվեարկության բաց կամ փակ ձևը որոշում է խորհուրդը/ քարտուղարը:
- Յուրաքանչյուր նիստից հետո ,երկու աշխատանքային օրվա ընթացքում ,նիստի արձանագրությունը ներկայացվում է հրապարակման ` դպրոցի պաշտոնական կայքում:
- խորհրդի նիստերի արձանագրությունը պահվում է ուսումնական հաստատությունում

Կառավարման խորհրդի նախատեսված նիստերի ժամանակացույց g /01.01.2023 - 31.12.2023թ/

Կիստի համար	Անցկացվող ժամանակահատված	Գնականգային հարցեր
1	01.02.2023-31.03.2023	1. 2023թ2-րդ կիսամյ ակի հաստիքացուցակի և տարիֆիկացիոն ցուցակների մասին 2. 2023թեկամու տների և ծախսերի նախահշվի մասին 3. 2022-2023թառաջին կիսամյ ակի տնօրենի տեղակալների հաշվետվութլ ու նների ընկարկու մ
2	01.04.2023-30.06.2023	1. Ներքին գնահատման հանձնաժողովում անդամ առաջադրել ու մասին
3	01.07.2023-30.09.2023	1. 2023-2024 ու ու մնական տարվա հաստիքացուցակի և տարիֆիկացիոն ցուցակների մասին 2. 2022-2023 ու ու մնական տարվա տնօրենի, տեղակալների հաշվետվութլ ու նների ընկարկու մ 3. Ու ու ցիչ ներին տրվող լ ռավճարների մասին 4. Ներքին գնահատման մասին 5. Ներքին կարգապահական կանոնները հաստատել ու մասին
4.	01.10.2023-30.12.2023	1. 2024թեկամու տների և ծախսերի ընկարկու մ 2. 2023 թվաառաջի դրամական միջոցների հոսքերի, նախահշվիների, կատարված փոփոխութլ ու նների հաստատման մասին 3. Ու ու մնական հաստաութլ ան աշխատակիցներին լ ռավճարներ հատկացնել ու մասին

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԶՄԵՆ Ա-Ի ԱՆՎԱՆ
N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1. Հանրակրթության ոլորտի կայացած օրենսդրական դաշտ բնականոն ղեկավարման և կառավարման համար	1. Կառավարման հստակ քաղաքականության մշակման գործընթացի երբեմն ոչ մասնակցային բնույթը
2. ԿՊԿԼՄ,Լիազոր մարմնի կրթության բաժնի աշխատակիցները տեղեկատվության տարբեր միջոցներով/էլեկտրոնային/ իրազեկում են նոր հրամանների,որոշումների,կարգերի,նախագծերի և փոփոխությունների մասին	2.Համագործակցության և մասնակցային աշխատատեղը ունի բարելավվման կարիք
3.ԿՊԿԼՄ-ի,Լիազոր մարմնի հետ իրականացվում է պաշտոնական էլեկտրոնային թափաքցիկ փաստաթղթաշրջանառություն /ուսումնադաստիարակչական,վարչական/	3. Իրականացված վերապատրաստումների մեջ բացակայում են կառավարման և ղեկավարման ,զարգացման ծրագրի չափանիշների վերաբերյալ թեմաները
4. Հաստատության և կառավարման մարմինների համագործակցությունը կատարվում է ժողովրդավարության սկզբունքների հիման վրա և մասնակցային է	4. Բացակայում են խորհուրդների անդամներին առաջադրման համար ներկայացվող չափանիշներ
5.Հաստատության և կառավարման մարմինների/ԿԳՄՄՆ և Լիազոր մարմնի/ հետ համատեղ իրականացրել և իրականացնում ենք համատեղ որոշումներ/կյանքի դժվարին իրավիճակում կամ այլ իրավիճակում հայտնված սովորողների վերաբերյալ	5. Բացակայում են խորհուրդների անդամների աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմներ
6.Լիազոր մարմինը տնօրենի նախաձեռնություններում տալիս է իր համաձայնությունը,անհրաժեշտության դեպքում նաև աջակցում	6. Սովորաբար դպրոցի խորհրդի աշխատանքներում ԿԳՄՄ նախարարության և ՏԻՄ/մարզպետարանի ներկայացուցիչները ավելի պասիվ դերակատարում ունեն քան մյուս անդամները
7. Մարզպետարանի կրթության բաժնի աշխատակիցները իրականացնում են գործընկերային,համագործակցային և մասնակցային աշխատատեղ	7. Կառավարման խորհրդի անդամների մի մասը կրթական ոլորտի ներկայացուցիչներ չեն և ունեն մոտիվացիայի պակաս
8.ԿՊԿԼՄ-ի կողմից զարգացման ծրագրի հստակ չափանիշների սահմանումը	8.Կառավարման խորհրդի որոշ անդամների հետ հանդիպումները սահմանափակվում են նիստերով
9.Կրթության որակի բարելավմանը միտված պարբերաբար ԿՊԿԼՄ-ի կողմից անցկացվում են հանդիպումներ,սեմինարներ,խորհրդակցություններ,վեբինարներ	9.Կառավարման խորհրդի համար չունենք առանձնացված սենյակ
10. Կառավարման մարմինները արագ արձագանքում են բոլոր խնդիրներին	
11. Դպրոցի կառավարման խորհուրդը կոմպետենտ է և համագործակցող	

12. Կառավարման խորհրդի բոլոր նիստերը անցկացվում են բարոյահոգեբանական լավ մթնոլորտում	
13. Կառավարման խորհրդի անդամները մասնակցություն են ցուցաբերում դպրոցում իրականացվող միջոցառումներին	
14. Կառավարման խորհրդի անդամները փոխադարձ հարգանք ունեն միմյանց նկատմամբ	
15. Կառավարման խորհուրդը աջակցում է դպրոցի զարգացման ծրագրի կատարմանը	
16. Կառավարման խորհրդի քննարկումները լինում են կառուցողական մթնոլորտում, պարբերաբար խորհրդի անդամները հանդես են գալիս նոր առաջարկություններով	
17. 2022 թվականին կառավարման խորհրդի բոլոր անդամները վերապատրաստվել են	

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Դպրոցի մանկավարժական խորհուրդը կազմված է 50 մանկավարժական աշխատողներից Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝

- 1)** հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան, ապահովելով նրանց կյանքի և առողջության պահպանումը.
- 2)** սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ եթե առկա է ծնողի ստորագրած համաձայնագիրը, կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումը.
- 3)** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները.
- 4)** ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման, ուսումնական խմբակների, երկարօրյա խմբերի և ուսումնական կաբինետների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը.
- 5)** ուսումնական հաստատությանը փորձաքննության տրամադրված կամ իր կողմից մշակված հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, դպրոցի ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր.
- 6)** ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և հաշվետվությունը, դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը
- 7)** ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր

Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝

- 1)** տնօրենի նախաձեռնությամբ.
- 2)** մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.
- 3)** լիազորված մարմնի նախաձեռնությամբ

Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են, անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ (սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ) և այլ անձինք:

Դպրոցում ձևավորվել են 5/հինգ/ մեթոդական միավորում

- . Բնագիտամաթեմատիկական
- . Հայոց լեզու և գրականություն, պատմություն
- . Օտար լեզուներ
- . Տարրական
- . Տեխնոլոգիա, ֆիզիկա, ԼՁՊ

Դպրոցի աշակերտական խորհուրդը կազմված է 26 անդամից

Դպրոցի աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան:
Աշակերտները կարող են նաև ըստ հետաքրքրությունների ստեղծել ակումբներ, միավորումներ, որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ են:Մեր դպրոցում աշակերտական խորհուրդը մասնակցություն է ունենում ներքին կարգապահական կանոնների մշակմանը.

Ս ո վ ո Ր Ո Ղ Ն Ե Ր Ի մ ա ս ն ա կ ց ու թ յ ու ն ը հ ա ս տ ա տ ու թ յ ան ն եր ք ի ն կ ար գ ա պ ա հ ա կ ան կ ան ո ն ն եր ի մ շ ա կ մ ան ը և մ ա ս ն ա կ ց ու թ յ ու ն ու ն ե ց ա ծ ս ո վ ո Ր Ո Ղ Ն Ե Ր Ի տ ո կ ո ս ը			
Վ եր ք ի ն 3 տար ու մ հ ա ս տ ա տ ու թ յ ան ն եր ք ի ն կ ար գ ա պ ա հ ա կ ան կ ան ո ն ն եր ի մ շ ա կ մ ան ը ս ո վ ո Ր Ո Ղ Ն Ե Ր Ի մ ա ս ն ա կ ց ու թ յ ան դ ե պ ք եր ը	մ շ տ ա պ ե ս	Մ ա ս ն ա կ ի ց ս ո վ ո Ր Ո Ղ Ն Ե Ր Ի տ ո կ ո ս ը ` ս ո վ ո Ր Ո Ղ Ն Ե Ր Ի ը ն դ հ ան ու թ վ ի ն կ ա տ մ ա մ ք	Մ ե կ ն ա ք ան ու թ յ ու ն
1.Հ ա ս տ ա տ ու թ յ ան ն եր ք ի ն Կ ար գ ա պ ա հ ա կ ան կ ան ո ն ն եր ի մ շ ա կ ու մ ու մ ա ս ն ա կ ց ու թ յ ու ն	ս ե պ տ ե մ ք եր մ ա յ ի ս	10%	Կ ար գ ա պ ա հ ա կ ան հ ար ց եր ի ն ն եր գ ր ա վ վ ե լ ը ս ո վ ո Ր Ո Ղ Ն Ե Ր Ի 2 ր ք ան ու մ ք ար ձ ր ա ց ն ու մ է պ ա տ ա ս ի ա ն ա տ վ ու թ - յ ան զ գ ա ց ու մ ը աշ ա կ եր տ ի ն դ ար ձ ն ու մ առ ա վ ե լ զ գ ո ն և պ ար տ ա ճ ան ա չ :
2.Տ ար վ ա ը ն թ ա ց ք ու մ ս տ ու զ ու մ ե ն դ ա ս ա գ ր ք եր ի վ ի ճ ա կ ը :	ս ե պ տ ե մ ք եր մ ա յ ի ս	10%	Մ շ տ ա պ ե ս Ա հ-ի և Դ հ-ի կ ող մ ի ց ս տ ու զ վ ե լ է դ ա ս ա գ ր ք եր ի վ ի ճ ա կ ը ,եր ե խ ան եր ի մ ո տ ձ և ա վ ո Ր Վ ու մ է դ ա ս ա գ ր ք եր ը խ ն ա մ ք ո վ օ գ տ ա գ ո Ր Ց ե լ ու կ ու լ լ տ ու թ ան :
3.Ա մի ս ը 2 ան զ ա մ ս տ ու զ ու մ ե ն դ ա ս ա ր ան ն եր ի մ ա ք թ ու թ յ ու ն ը.	յ ու թ ա ք ան չ յ ու թ ա մ ս վ ա 1-ի ն և 15-ի ն	20%	Մ շ տ ա պ ե ս Ա հ-ի և Դ հ-ի կ ող մ ի ց ս տ ու զ վ ե լ է դ ա ս ա ր ան ն եր ի մ ա ք թ ու թ յ ան վ ի ճ ա կ ը ,ո թ ն է լ եր ե խ ան եր ի մ ո տ առ ա ջ ա ց թ ե լ է պ ա տ ա ս ի ա ն ա տ վ ու թ յ ու ն կ ար գ ու կ ան ո ն ի ն կ ա տ մ ա մ ք :
4.Հ եր թ ա պ ա հ ու թ ան կ ա զ մ ա կ եր աւ մ դ ա ս ա մ ի ջ ո ց ն եր ի ն յ ու թ ա ք ան չ ու թ հ ար կ ու մ , դ ա ս ա ր ան ն եր ու մ ,հ ա ն դ եր ձ ա ր ան ն եր ու մ :	մ շ տ ա պ ե ս	50%	Ա շ ա կ եր տ ն եր ը ա վ ե լ ի հ ո գ ա տ ա ր ե ն լ ի ն ու մ մ ի մ յ ան ց ն կ ա տ մ ա մ ք և ձ և ա վ ո Ր Վ ու մ է ի թ ա ր օ գ ն ե լ ու գ ա դ ա փ ա ր ը :

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմված է 28 ծնողներից

- 1. Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված՝ նախագահից և երկուսից չորս անդամից) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար:
- 2. Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:
- 3. Դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ իր կազմից առաջադրում է խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկությամբ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուն:
- 4. Համադպրոցական հարցերի քննարկման համար դպրոցի ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն երկու անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և դասղեկների նախաձեռնությամբ կարող են հրավիրվել արտահերթ համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ:

Ծնողխորհրդի գործունեության վերաբերյալ ցուցանիշներ

Ց ու ց ա ն ի շ	2020-2021	2021-2022	2022-2023
Ս ո վ ո ռ ո ղ ն ե ր ի ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկության թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացված ինկատամբ.	6առաջարկ 100 %	5առաջարկ 100 %	3առաջարկ 100 %
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարուկ կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկոյ թների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը	20	28	37
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, ներանցնել ատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը	-----	-----	-----
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա ընթացքում	5	6	6
Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողագործ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցության ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարուկ:	11%	13,3%	12,4%

2. ՈԼՈՐՏԸ՝ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ՆՊԱՏԱԿԸ՝ Դպրոցում կառավարման և ղեկավարման կարողությունների հզորացում, ինչպես նաև խորհրդակցական մարմինների և որոշումների կայացման մասնակցային գործընթացի արդյունավետության բարձրացում

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- 1. Ապահովել դպրոցի համագործակցությունը և մասնակցայնությունը կառավարման մարմինների հետ և մշակել հստակ մեխանիզմներ ուսումնական գործընթացում ծնողների ակտիվ ներգրավման և սերտ համագործակցության համար
- 2. Բարձրացնել դպրոցի խորհրդակցական մարմինների ակտիվությունը՝ նրանց ներգրավելով որոշումների կայացման գործընթացում
- 3. Ստեղծել պայմաններ աշակերտական խորհուրդների դերի բարձրացման համար: Կազմակերպել մասնագիտական կողմնորոշման, աշակերտական խորհուրդների միջև փորձի փոխանակման միջոցառումներ

ՌԻՍԿԵՐԸ՝

- 1. Համագործակցող կողմերից մեկի անտարբերությունը
- 2. Ծնողների անտարբերությունը և կաշկանդվածությունը դպրոցին վերաբերող հարցերում
- 3. Խորհրդակցական մարմինների ոչ բավարար տեղեկացվածությունը և անտարբերությունը
- 4. Աշակերտական խորհրդի նոր անդամների դժվար ինտեգրումը կատարվող աշխատանքներին

ՌԻՍԿԵՐԻ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- 1. Պարբերաբար հանդիպումներ կառավարման մարմինների հետ
- 2. Ներգրավվել ծնողներին ուսումնադաստիարակչական գործընթացներում և լուսաբանել դպրոցի կայքերում
- 3. Արժևորել խորհրդակցական մարմինների դերը՝ դպրոցում՝ ստեղծելով պաստառներ ձեռքբերումների և տեղեկացվածությանը վերաբերող
- 4. Նախկին շրջանավարտներին ներգրավվել նոր ձևավորվող աշակերտական խորհուրդների ,մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում և իրականացնել փորձի փոխանակում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
1.Ուսումնասիրել դպրոցների կառավարման և ղեկավարման միջազգային,տեղական փորձը և տեղայնացնել	տնօրեն, վարչատնտեսական համակարգող,տնօրենի տեղակալ	2023-2028թթ	Ժամանակավոր աշխատանքնային խումբ		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
2.Մասնակցություն ունենալ կառավարման մարմինների կողմից ընդունված նոր նախագծերի քննարկմանը e-draft.am-ում և առաջարկություններ ներկայացնել, հետադարձ կապը ապահովել	տնօրեն, համակարգող, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028թթ	Փոքր աշխատանքային խմբեր		Լիազոր մարմին , Կառավարման խորհուրդ, Մանկավարժական խորհուրդ
3.Ծնողների համագործակցության աշխատանքային պլան կազմել/ԾՀԱՊ	տնօրեն, տնօրենի տեղակալ, ծնող-կոմիտեի նախագահ, մասնագիտական աջակցությունների գծով համակարգող	2024 հունվար	Ծնողների և տնօրենության փոքր աշխատանքային խումբ		Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ
4.Խորհրդակցական մարմինների համար կազմակերպել սեմինարներ՝ իրենց գործառնությունների և դերի վերաբերյալ	տնօրեն, տնօրենի տեղակալ, խորհրդակցական մարմինների ղեկավարներ, մասնագիտական աջակցությունների գծով համակարգող	2023-2024 ուս.տարի	համապատասխան նյութեր, սլայդներ, կենդանի օրինակներ		Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Մանկավարժական խորհուրդ, Աշակերտական խորհուրդ
5.Ճարունակել համագործակցությունը և մասնակցությունը միջազգային, հանրապետական, մարզային և տեղական մրցույթներին	տնօրեն, տնօրենի տեղակալ, խորհրդակցական մարմինների ղեկավարներ, մասնագիտական աջակցությունների գծով համակարգող, Մ/մ նախագահներ	2023-2028	շարունակել աշխատել խճանկարային մեթոդով		Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Մանկավարժական խորհուրդ, Աշակերտական խորհուրդ
6.Ճարունակել իրականացնել նախկին աշակերտների կողմից մասնագիտական կողմնորոշման դասընթացների իրականացումը	տնօրեն, տնօրենի տեղակալ, աշակերտական խորհուրդ, մասնագիտական աջակցությունների գծով համակարգող	2024 հոկտեմբեր 2025 հոկտեմբեր 2026 հոկտեմբեր 2027 հոկտեմբեր 2028 հոկտեմբեր	ՏՀՏ հազեցած կաբինետ		Կառավարման խորհուրդ, Աշակերտական խորհուրդ
7.Խորհրդակցական մարմինների աշխատանքը լուսաբանել և արժևորել	տնօրեն, տնօրենի տեղակալ, խորհրդակցական մարմինների ղեկավարներ, մասնագիտական աջակցությունների գծով համակարգող	2023-2028	Պաշտոնական և ֆեյսբուքյան կայք		Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Մանկավարժական խորհուրդ, Աշակերտական խորհուրդ

1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ,ծնողական համայնքի ,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-Ի ՀԵՏ

Դպրոցի կառավարման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն որոշակի միջավայրով,որտեղ գտնվում է,ինչպես նաև դպրոցի կառավարմանը համայնքի մասնակցության ակտիվությամբ:

Դպրոցը գտնվում է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում, հիմնադրվել է 1947 թվականի փետրվարի 23-ին, որպես ավան` Լուսավան անվանմամբ: 1961 թվականին ստացել է քաղաքի կարգավիճակ, իսկ 1967 թվականի սեպտեմբերի 23-ին Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակին վերանվանվել է Չարենցավան: 2017 թվականի նոյեմբերի 11-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ անելու մասին ՀՀ օրենքի համաձայն ձևավորվել է Չարենցավան խոշորացված համայնքը: Համայնքը ընդգրկում է թվով վեց բնակավայր` Չարենցավան, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս և Ֆանտան:

Դպրոցի կառավարման գործընթացում գնալով աճում է համայնքի անդամների դերն ու նշանակությունը,որի գնահատման համար պետք հարցում անցկացնել համայնքի անդամների շրջանում և դրանց արդյունքների մաթեմատիկական մշակման միջոցով որոշել դպրոցում իրականացվող ծրագրերին նրանց մասնակցության դինամիկան:

Դպրոցի աշակերտների կողմից իրականացվել և իրականացվում են.

- .հարցազրույցներ** ինչպես համայնքի անդամների,այնպես էլ համայնքապետարանի աշխատակիցների և համայնքի ղեկավարի հետ
- .սոցիոլոգիական հարցումներ** համայնքի բնակիչների շրջանում,հիվանդանոցում
- .պարբերական այցելություններ** և դրանց արդյունքում կատարված դիտարկումներ
- .համայնքի խնդիրներին ուղղված նախագծային աշխատանքներ/**կինոյի շենք,լողավազան,կանաչ տարածքներ/
- .բնապահպանական բնույթի ծրագրեր**
- .համագործակցում ենք „Առաքելություն Հայաստան” -ի հետ**

/կից ներկայացնում են կատարված աշխատանքների հղումներ/

.https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid021a8xP8WzUAuqrFiNSSpaN4CH3fWyHb7hPJbGwGvFVC28taFvf6vrUGjiyc3DEC3il&id=100033176371934&mibextid=Nif5oz

https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid02KmSCRWXDJf9eXfGhPxCCCL2AV93TXyyuiEtvJ2GWT7S4zXRSw65TTHjWTSMfgZ6ogl&id=100069025515835&mibextid=Nif5oz

Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1.Դպրոցը համագործակցում է համայնքի հետ,համագործակցության արդյունքում համայնքի ավագանին հատկացրել է դպրոցի մարզադաշտի տարածքը՝ անհատույց օգտագործման իրավունքով

1.Համայնքի բյուջեն միշտ չէ,որ հնարավորություն է տալիս դպրոցին դիմելու ֆինանսական աջակցություն ստանալու խնդրանքով

2.Համագործակցության արդյունքում բարեկարգվել է մարզադաշտի հարակից տարածքը

2.Համայնքը -դպրոց կապը դեռ լիակատար չէ,հիմնականում համագործակցությունը իրականանում է դպրոցի նախաձեռնությամբ

3.Համագործակցությունը իրականացվում է մշակույթի ,սպորտի քնազավառներում երաժշտական և արվեստի դպրոցների հետ

4.Համագործակցում ենք կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին համալիր օժանդակության գործում

5.Դպրոցի խնդիրները ներկայացնում ենք համայնքի ավագանուն

6.Դպրոցում իրականացվող գրեթե բոլոր միջոցառումներին ներգրավված է համայնքի ավագանին

7.Դպրոցի աշակերտները ակտիվորեն մասնակցում են Չարենցավանի Սուրբ փրկիչ եկեղեցում տեղի ունեցող տոնական միջոցառումներին

8.Ակտիվորեն մասնակցում ենք համայնքում իրականացվող ծառատունկին,շաբաթօրյակներին

9.Դպրոցի „ԱՐՄԱԹ“ լաբորատորիան սպասարկում է համայնքի երեխաներին

10.Մեր դպրոցի աշակերտները և ուսուցիչները ակտիվ համագործակցում են համայնքի գրադարանի հետ

11.Համայնքի արտադրամասերը,գործարանները համագործակցում են դպրոցի հետ ուսումնական գործընթացին վերաբերող հարցերում

12.Դպրոցը իրականացնում է համագործակցություն ինչպես մեր մարզի,այնպես էլ այլ մարզերի համայնքային դպրոցների հետ.մասնավորապես համագործակցում ենք ք. Արովյանի թիվ 2 հիմնական և Սյունիքի մարզի Շինուհայր գյուղի միջնակարգ դպրոցի հետ

13. Համագործակցում ենք Չարենցավանի „Ֆան“ ֆուտբոլային ակումբի հետ

14.Ամեն տարի հասարակագիտություն առարկայի շրջանակներում աշակերտները իրականացնում են նախագծային աշխատանքներ

1.4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Դպրոցի կառավարման համակարգի էությունը, նրա ղեկավարների, մանկավարժների, ծնողների գործունեությունը կարելի է բնորոշել <<մանկավարժական կառավարում>> հասկացությամբ, որն իրականացնում են ոչ միայն տնօրենները, այլև ուսուցիչները, ծնողները սովորողների ուսուցման և դաստիարակության գործընթացը կազմակերպելիս:

Անշուշտ, մանկավարժական կառավարման, նրա օբյեկտի, առարկայի խնդիրների, միջոցների և մեթոդների ուսումնասիրումը, դպրոցի տնօրենների, ուսուցիչների, ծնողների կառավարչական աշխատանքի տարբեր տեսանկյունների բացահայտումն ու բնութագրումը, թույլ կտա ստեղծել ուսումնադաստիարակչական աշխատանքների կառավարման ընդհանուր տեսություն, որը և կդառնա դպրոցում տարվող աշխատանքների մեթոդական հիմքը և գլխավոր ուղղորդողը:

Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության իրականացնում է իրեն վերապահված աշխատանքները:

Ծնողական խորհուրդը սերտ համագործակցել և համագործակցում է դպրոցի տնօրենության և ուսուցիչների հետ: Ամիսը մեկ անգամ անցկացվել և անցկացվում են ծնողական ժողովներ, իսկ երկու ամիսը մեկ անգամ տեղի են ունեցել և ունենում նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են վիճահարույց հարցեր, կայացվել են աշակերտների առաջադիմությանը և արդյունավետ ուսումնառությանը նպաստող որոշումներ:

Ծնողների կողմից պարբերաբար անցկացվել և անցկացվում են դասալսումներ, մասնակցել և մասնակցում են հոգեբանի կողմից կազմակերպված խորհրդատվություններին, աշխատանք է տարվել և տարվում դժվար դաստիարակվող, ուշացող, անհարգելի բացակայող, ԿԱՊԿՈՒ, առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող աշակերտների ծնողների հետ:

Կրտսեր դասարանների ծնողները մասնակցել և մասնակցում են «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի կազմակերպչական աշխատանքներին:

Ստորև մասնրամասն նկարագրված է ծնողական խորհրդի հետ կատարված հարցումները, վերլուծությունը, որից էլ բխում է մեր հետագա աշխատանքի ճանապարհային քարտեզը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

1. Ծնողական համայնքի կողմից մեծ վստահություն
2. Ակտիվ մասնակցություն ուսումնադաստիարակաչական գործընթացներում
3. Աջակցություն դպրոցին, համայնքին
4. Նախաձեռնողականություն են ցուցաբերում ծնողները
5. Ակտիվ մասնակցություն սեմինարներին, վերապատրաստումներին, քննարկումներին
6. Աջակցություն „Դպրոցական սնունդ” ծրագրի շրջանակներում դպրոցին
7. Ամենօրյա մշտադիտարկում ճաշարանում
8. Աջակցում են արտադպրոցական միջոցառումներին
9. Կազմակերպում են էքսկուրսիաներ, նպատակային շրջագայություններ
10. Համագործակցում են խորհրդակցական մյուս մարմինների հետ
11. Յուրաքանչյուր օր ժամը 14.30-ից հետո ծնողները հանդիպում են ուսուցիչների, տնօրենության հետ
12. Ծնողների անմիջական նախաձեռնությամբ և մասնակցությամբ ձևավորվել և ձևավորվում են դպրոցի միջանցքները, դպրոցի գողտրիկ մի անկյուն վեր է ածվել աշնանային „հեքիաթի”
13. Մասնակցություն են ունենում հարցումներին տարաբնույթ
14. Տնօրենության և ծնողական կոմիտեների համագործակցում ենք նաև viber հավելվածով, որը նախատեսված է արագ արձագանքման համար

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ


1. Ծնողական համայնքը ունի ցածր իրազեկվածության մակարդակ դպրոցի աշխատանքների վերաբերյալ
2. Չենք իրականացնում երկարօրյա ուսուցում ծնողների նախաձեռնությամբ
3. Արտադասարանական միջոցառումների կազմակերպման ժամանակ ֆինանսական խնդիրներ են առաջանում

Ծնողական համայնքի հետ համագործակցությունը մեծացնելու նպատակով իրականացրել ենք հարցում ծնողների շրջանում: Հարցման նպատակն է բացահայտել ծնող-դպրոց համագործակցության նոր հնարավորությունները և բարձրացնել այդ համագործակցության արդյունավետությունը՝ ավելի ամուր կապեր ստեղծելով մեր դպրոցի և ծնողական համայնքի միջև: Ներկայացնում են հարցման արդյունքները:

Հարգելի՛ ծնող, խնդրում ենք ընտրել Ձեր երեխաների դասարանները

Պատճենել


495 պատասխան



Ի՞նչ կգնահատեք դպրոցի հետ Ձեր համագործակցությունը

Պատճենել


495 պատասխան



Արդյո՞ք կարևորում եք ծնողի դերը երեխայի կրթության մեջ:

495 պատասխան

Պատճենել




Արդյո՞ք համաձայն եք հետևյալ մտքի հետ:

Ծնողների ներգրավվածությունը երեխայի ակադեմիական առաջադիմության մեջ ավելի կարևոր գործոն է, քան բուն դպրոցի որակները:

495 պատասխան


Պատճենել



Դպրոց-ծնող հաղորդակցության կարևոր նպատակը միասին աշխատելն ու ամուր հարաբերությունների ձևավորումն է:

495 պատասխան


 Պատճենել



Կցանկանալի՞ք ավելի սերտ համագործակցել դպրոցի հետ

495 պատասխան


 Պատճենել



Պատրա՛ստ եք դպրոցում որպես ծնող

495 պատասխան

Պատճենել




- վարել սեմինար
 - ուսուցչի հետ համատեղ դաս վարել
 - պատի թերթ ձևավորել
 - Ոչ
 - Այո
 - Հետևել դասապրոցեսին
 - Աջակցելու ուժերիս ներածին չափով
 - Hnaravorutyanyan depgum ognel
- 1/6

Խնդրում եմք ընտրել Ձեր մասնագիտությունը

495 պատասխան

Պատճենել



- ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ՀՈՒՄԱՆԻՏԱՐ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՍ...
- ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
- ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- ՄԵԿԱԿՈՒԹԵԹ ԵՎ ԱՐԿԵՍՏ
- ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎ...
- ԲՆԱԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՌԱ...
- ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱ...


1/10

1.4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցի կառավարման համար անհրաժեշտություն է մի շարք մարդկանց և մարդկային խմբերի համատեղ աշխատանքը, նրանց մինչև աշխատանքի բաժանումը, որի արդյունքում կառավարող համակարգում ձևավորվում են կառավարման մարմինները, պաշտոնները, կառավարման ստոնաբաժանումները/մանկավարժական խորհուրդը, մեթոդական խորհուրդները, աշակերտական խորհուրդը, ծնողական խորհուրդը և այլն/:

Յուրաքանչյուր պաշտոնատար անձի և յուրաքանչյուր ստորաբաժանման ամրագրված են ինչ-որ գործառնության կատարման պատասխանատվություն, իրավունքներ: Այս ամենի հիման վրա ստեղծվում է դպրոցի կառավարման կազմակերպչական կառուցվածքը: „Կառուցվածք” բառը նշանակում է ամբողջ մասերի միջև կայուն կապերի և հարաբերությունների ամբողջությունը:

Մեր դպրոցի կառավարակազմակերպչական կառուցվածքը հետևյալ պատկերն ունի:



1.4.Համագործակցությունը շահառու կազմակերպությունների հետ



Ուսումնական հաստատության տնօրենությունը, մանկավարժական կազմը, ուսումնաօժանդակ անձնակազմը մասնակցություն է ունենում ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող կրթական ծրագրերին, մրցույթներին, միջոցառումներին, ծրագրերին:



Դպրոցի ուսուցիչները համագործակցում են „ԴՇՀ“-ի հետ և համագործակցության արդյունքում մասնակցել են առարկայական ՀԴԶ-ի, ուսումնական նյութերի, ուսումնական ձեռնարկների, դասագրքերի ստեղծման նախապատրաստական աշխատանքներում



Ուսումնական հաստատությունը և „ԿԶՆԱԿ“ հիմնադրամի հետ համագործակցությունը բազմակողմանի է.
.ՈւԴԱԴ-ը, ՆԴԴ-ը կազմվել են „ԿԶՆԱԿ“ հիմնադրամի ուղեցույցի հիման վրա
.Մեթոդական միավորումների և մանկավարժական խորհրդի նիստերի օրակարգը ևս կազմվում է „ԿԶՆԱԿ“ ում տեղադրված ուղեցույցի հիման վրա
.Ուսուցիչները ներբեռնում են թեմատիկ ուսումնական պլանները, ուսումնական նյութերը, խմբակների ծրագրերը
.Տնօրենության, ուսուցիչների մեծ մասը մասնակցում են հիմնադրամի կողմից կազմակերպվող վեբինարներին, վերապատրաստումներին, մեթոդական նյութերի մշակմանը
.Ակտիվորեն մասնակցել ենք „Իմ կյանքը համայնքում“, „ Հայ երգը դպրոցում“, „Ես եմ ռեժիսորը“ նախագծերին

	Համագործակցում ենք ուսուցիչների պարտադիր վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների հետ		Բնագիտական առարկաների և Նաև մյուս ուսուցիչները օգտվում են „Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ“ հարթակից, e-school Armenia կայքից, «eTwinningPlus Armenia» կայքում իրականացնում են մի շարք նախագծային պրոեկտներ:
	Համագործակցում են Կոտայքի ՏՄԱԿ-ի հետ.հրավիրվում են համատեղ ժողովներ,համատեղ քննարկումներ,վերապատրաստումներ և աջակցություն:		„ԱՅԲ“ կրթական հիմնադրամի հետ համագործակցում ենք մրցույթների ակտիվ մասնակցությամբ: Համագործակցության արդյունքում ունենք երեքը մեկում բնագիտական առարկաների լաբորատորիայի նախագիծ
	„Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա“ ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում կահավորվել է մանկավարժահոգեբանական աջակցության կաբինետը		Չարենցավան քաղաքում „Առաքելություն Հայաստան“ հիմնադրամի հետ միասին աջակցություն ենք ցուցաբերում մեծահասակներին

ՌԻՍԿԵՐ

1. Արտակարգ իրավիճակներում որևէ շահառու կազմակերպության գործունեության դադարում

Ուժեղ ԿՈՂՄԵՐ

1. Հաստատությունը ակտիվորեն համագործակցում է շահառու կազմակերպությունների հետ.
2. ԿԶՆԱԿ հիմնադրամում և վերապատրաստող կազմակերպություններում մենթոր ուսուցիչներ ունենք

Ռիսկերը մեղմացնող և չեզոքացող գործողություններ

1. Ունենալ բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրեր

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1. Համագործակցության շրջանակները բավարար չեն

3. ՈԼՈՐՏԸ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-ի,ՆՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ,ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ և ՇԱՐԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

ՆՊԱՏԱԿԸ՝ Համագործակցության շրջանակների ընդլայնում և համատեղ որոշումների կայացում/դպրոց-համայնք-ծնողական խորհուրդ-շահառու կազմակերպությունները
ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- 1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների խելամիտ հարմարեցումների շուրջ լայն համագործակցություն
- 2. Ընդլայնել ծնողների հետ համագործակցությունը արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպման հարցերում
- 3. Պահպանել և բարձրացնել դպրոցի ունեցած դերն ու հեղինակությունը համայնքում,մարզում,հանրապետությունում
- 4. Իրականացնել սովորողների երկարորյա ուսուցման և սննդի կազմակերպման աշխատանքներ

ՌԻՍԿԵՐԸ՝

- 1. Տարածայնություններ և անտարբերություն համագործակցող կողմերի միջև
- 2. Համայնքի տեսակետը . դպրոցը որպես մարզային ենթակայության կառույց դիտարկելը
- 3. Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում ֆինանսական ծախսերի կարիքը/երկարորյա ուսուցում և սննդի կազմակերպում

ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԼԿԱԶԵՑՄԱՆ ՈՒՂԿԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- 1. Համայնքային,մարզային,հանրապետական միջոցառումներում շարունակել ունենալ ակտիվ մասնակցություն
- 2. Մասնակցություն ունենալ համայնքի հնգամյա ծրագրի քննարկմանը
- 3. Ֆոնդահայթաթման Նոր մեթոդների կիրառում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
1.ՀՈԱԿ-րի հետ իրականացել մարզական միջոցառում/սպորտլանդիա	տնօրեն,վարչատնտեսական համակարգող, կրթական աջակցությունների գծով համակարգող,ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	2024 հունիսի 1	մարզադաշտ և սպորտլանդիա կազմակերպելու գույք,պատվոգրեր,մրցանակներ	Պետական բյուջե	Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,ծնողական խորհուրդ
2. Շարունակել և ընդլայնել ծնողական համայնքի հետ համագործակցությունը հարցումների հիման վրա	տնօրեն, տնօրենի տեղակալ,դասղեկներ,ծնողներ	2023 -2028			Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,ծնողական խորհուրդ

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
3. Ճարուևակել համագործակցությունը „Առաքելություն Հայաստան” ՀԿ-ի հետ	տնօրեն,կրթական աջակցությունների գծով համակարգող,ԴԱԿ	2023-2028	աշակերտական խորհուրդ մշակութային միջոցառումներ		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,ծնողական խորհուրդ
4.Ծնողների հետ համագործակցել և որոշում ընդունել. կազմակերպել երկարօրյա ուսուցում	տնօրեն, տնօրենի տեղակալ,դասղեկներ,ծնողներ	2023 -2028	ֆինանսական	ծնողական ներդրում	Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,ծնողական խորհուրդ
5.Ծնողների կողմից արված առաջարկների հիման վրա քննարկել նախագծեր և կազմակերպել հիմնական դպրոցի սովորողների սննդի գործընթացը	տնօրեն,կրթական աջակցությունների գծով համակարգող,դասղեկներ,ծնողներ	2024-2028	ֆինանսական	ծնողական ներդրում	Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,ծնողական խորհուրդ
6.Ճարուևակել համագործակցությունը շահառու կազմակերպությունների հետ/ԿՁՆԱԿ,ԴԾՀ,ԿՏԱԿ և այլն	տնօրեն,տնօրենի տեղակալ,Մ/մ նախագահներ,ուսուցիչներ	2023-2028	ուսումնադաստիարակչական աշխատանքներում		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,ծնողական խորհուրդ


1.5.Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում

Հայաստանի Հանրապետության կառավարության 16 փետրվարի 2023 թվականի N 216-Ն որոշման համաձայն դպրոցի մանկավարժական համակազմը բավարարում է ներկայացվող պահանջները :

Դպրոցի մանկավարժական համակազմը`
2023-2024 ուսումնական տարի

1.	Տնօրեն՝ հանրակրթական ուսումնական հաստատության	1
2.	Տնօրենի տեղակալ՝ հանրակրթական ուսումնական հաստատության	1
3.	Համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների	1
4.	Ուսուցիչ՝ հանրակրթական ուսումնական հաստատության	43
5.	Հոգեբան՝ հանրակրթական ուսումնական հաստատության	1
6.	Չինղեկ՝ հանրակրթական ուսումնական հաստատության	1
7.	Գրադարանավար՝ հանրակրթական ուսումնական հաստատության	1
8.	Լաբորանտ՝ հանրակրթական ուսումնական հաստատության	2
9.	Ուսուցչի օգնական՝ հանրակրթական ուսումնական հաստատության	4
10.	Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ՝ հանրակրթական ուսումնական հաստատության	1


Մանկավարժական համակազմ



2023-2024 ուսումնական տարում դպրոցում աշխատում է **46** ուսուցիչ, որից **3-ը** վարչական աշխատողներ են և դասավանդում են, **4-ը** գտնվում են ծննդաբերության և երեխաների խնամքի համար հատկացվող նպատակային արձակուրդում, իսկ **2-ը** աշխատում են համատեղությամբ: Ուսուցիչների տարիքային կազմը թույլ է տալիս պահպանել և փոխանցել դպրոցական ավանդույթները և նախադրյալներ է ստեղծում դպրոցի հետագա զարգացման համար.


Ուսուցիչների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Մինչև 30 տարեկան	6	6	3
31-ից 40 տարեկան	17	17	17
41-ից 50 տարեկան	13	13	16
51-ից 55 տարեկան	3	3	3
56 տարեկան և ավելի	7	5	5

2023-2024 ուստարի



Աշխատանքային փորձը	Մարդ	%
Մինչև 1 տարի	3	6.5
1 - 5 տարի	4	8.7
5 -10 տարի	8	17.3
10 - 15 տարի	8	17.3
15 - 20 տարի	7	15.2
21 - 30 տարի	6	13.0
31 - 40 տարի	8	17.3
40 տարուց ավել	2	4.3

2023-2024 ուս տարի




Ինչպես երևում է գծապատկերից, դպրոցի ուսուցչական կազմը բավականին փորձառու է և աշխատում է բարձր արդյունավետությամբ: Յուրաքանչյուր մեթոդական միավորում աշխատում է բոլոր տարիքային խմբերի ուսուցիչների, ինչը թույլ է տալիս որոշակի «ինքնաբավություն» ապահովել մանկավարժական հմտությունների և դպրոցական ավանդույթների շարունակականության մեջ:

Ուսուցիչների մասնագիտական որակավորման մակարդակը.

Ուսումնական գործունեության որակը բարելավելու նպատակով դպրոցը վարում է նպատակաուղղված կադրային քաղաքականություն, որի հիմնական նպատակն է ապահովել կադրերի թվային և որակական կազմի արդիականացման և պահպանման գործընթացների օպտիմալ հավասարակշռությունը իր զարգացման մեջ՝ համաձայն դպրոցի կարիքների և գործող օրենսդրության պահանջների:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ունի 45 ուսուցիչ / 97.8%-ը, միջին մասնագիտական՝ 1 ուսուցիչ / 2.2%-ը:

Ուսուցիչների թիվը	Կամավոր ատեստավորված	Երկրորդ տարակարգ	Առաջին տարակարգ	Համապատասխանում են պաշտոնին
46	5/10.8%	1/ 2.17 %	3/6.5 %	89.1 %



Մանկավարժական կազմից պարտադիր վերապատրաստման և տարբեր վերապատրաստումների են մասնակցել 2018-ից մինչև 2023 թվականը ` 46 ուսուցիչներից 41-ը,որոնցից

- ըստ մասնագիտական չափանիշների զբաղեցրած պաշտոնի (82%)
- 40 ուսուցիչներ (86.9%) բարձրացրել են իրենց որակավորումը հեռավար ուսուցման հարցերում
- ՏՀՏ հմտությունները բարելավվել են 38 ուսուցիչների կողմից (82.6%) տարբեր դասընթացներում
- 3(6.5 %) ուսուցիչներ մենթորներ են,իրականացնում են վերապատրաստման դասընթացեր տարբեր կազմակերպություններում

Ուսուցիչների նորարարական գործունեություն.

Ուսուցիչները ակտիվորեն մասնակցում են մանկավարժական տարբեր նախագծերին,մասնավորապես հանրապետական ,, Տարվա լավագույններ” մրցույթին,ինչպես նախ միջազգային/etwinning/ և մարզային մրցույթների` դառնալով հաղթողներ:
Առավել նշանակալից արդյունքները.

Տարի	Մրցույթը	Հաղթող/ներ/ Աննա Բալյան	Մրցանակ
2021	„Տարվա լավագույններ” Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն	Աննա Բալյան	Ծնորհակալագիր
2021	„Տարվա լավագույններ” Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն	Աննա Բալյան	Ծնորհակալագիր
2021	„Տարվա լավագույններ” Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն	Ասյա Երիցյան	Ծնորհակալագիր
2022	„Տարվա լավագույններ” Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն	Աննա Հարությունյան Ասյան Երիցյան	Ծնորհակալագիր
2021	eTwinning	Աննա Բալյան	Ազգային հավաստագիր
2021	eTwinning	Ասյա Երիցյան	Ազգային հավաստագիր
2021	eTwinning	Աննա Հարությունյան	Ազգային հավաստագիր

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների վերլուծություն	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1.Մանկավարժական համակազմը ունի ակադեմիական կարողություններ	1.Ամբողջությամբ լուծված չէ կադրայի խնդիրները,ուկենք համատեղությամբ աշխատող ուսուցիչներ
2. Ընդհանուր բարձր մակարդակի հաղորդակցության մշակույթ	2.Դեռ կան ուսուցիչներ,ովքեր ազատ չեն տիրապետում ՏՀՏ գործիքներին
3.Ուսուցիչների զգալի մասը ունեն բարձր մեթոդական պատրաստվածություն,առարկայական պատրաստվածություն	3.Այնուհանդերձ դեռ կան ուսուցիչներ,որոնք անցկացնում են ուսուցչակենտրոն դասերը
4.Ունեն քննադատական մտածողություն	4.Ուսուցիչների մի մասը չեն պատրաստվում մասնակացել կամավոր ատեստավորմանը
5.Ուսուցիչները դասերին կիրառում են ուսուցման տարբեր մեթոդներ	5.Տարակարգ ուկեցող ուսուցչների թիվը բավարար չէ
6.Ունեն նախաձեռնողականություն	
7.Մասնակցում են հանրապետական,մարզային,քաղաքային մրցույթների և ծրագրերի	
8.Ձգալի մասը կիրառում են ՏՀՏ տարբեր գործիքներ	
9.ՈՒՆԵՆՔ կամավոր ատեստավորված հինգ ուսուցիչ	
10. Առաջին և երկրորդ տարակարգ ստացած ուսուցիչներ	
11.Վարչական աշխատողները մեխթորներ են,իրականացրել են հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների,տեղակալների և կառավարման խորհրդի անդամների վերապատրաստումներ	
12.Վարչական աշխատողները ևս դասավանդողներ են	
13.Ուսուցիչները կատարելագործում են իրենց առարկայական և մասնագիտական հմտություններն ու գիտելիքները	
14.Համագործակցում են այլ ուսումնական հաստատությունների մասնագետների հետ	
15.Վայելում են ծնողների և աշակերտների սերն ու հարգանքը	
16.Կարողանում են դասերի ընթացքում ապահովել ներառականությունը	
17.Իրականացնում են արտադասարանական միջոցառումներ, մրցույթներ,բաց դասեր,համատեղ դասեր	
18.Մասնակցություն են ուկենում տարբեր վերապատրաստումների և սեմինարների	
19. Սկսնակ ուսուցիչները ստանում են աջակցություն փորձառու ուսուցիչներից	
20.Համագործակցում են ուսուցչի օգնականների,հոգեբանի,գրադարանավարի,լաբորանտների հետ	
21.Համագործակցում են մանկավարժահոգեբանական թիմի,ՏՄԱԿ-ի,ՀՄԿ-ի հետ	
22.Ունեն տեղեկատվության հետ աշխատելու կարողություն	
23.Համագործակցում են գործընկերների հետ` փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով	
24.Ընդհանուր առմամբ հարգում և պաշտպանում են սովորողների իրավունքներն ու ազատությունները	
25.Կատարում են օրենքով սահմանված պարտականություններն ու գործառույթները	
26.Մանկավարժահոգեբանական թիմը հաջողությամբ իրականացնում է ներառական կրթությունը	
27.Պահպանում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ,ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները	

4. ՈԼՈՐՏԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

ՆՊԱՏԱԿԸ՝ Բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում,որոնք տիրապետում են և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- 1. Մանկավարժական համակազմը համալրել փորձառու,դասավանդման ժամանակակից մեթոդներին տիրապետող մանկավարժական աշխատողներով
- 2. Նպաստել մանկավարժական համակազմի մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը
- 3. Մանկավարժական համակազմին մասնակից դարձնել նորագույն տեխնոլոգիական նվաճումներին և դասավանդման մեթոդներին

ՌԻՍԿԵՐԸ՝

- 1. Ուսուցչի մրցույթի կարգը
- 2. Որոշ մանկավարժական համակակազմի անտարբերությունը
- 3. Մանկավարժական համակազմում սկսնակ ուսուցիչների փորձառության պակասը

ՌԻՍԿԵՐԻ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂԱՅ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- 1. Մինչև մրցույթով համալրելը ժամանակավորապես կամ փորձաշրջանով թափուր տեղը համալրելը՝ դիտարկելու համար ուսուցչի բարոյական և մարդկային հատկանիշները բարեվարքության ու վարվեցողությունը
- 2. Մանկավարժական համակազմին խրախուսել,մոտիվացնել
- 3. Սկսնակ ուսուցիչների համագործակցության փորձառու ուսուցիչների հետ ընդլայնել

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
1.Մանկավարժական համակազմի շարունակական վերապատրաստում՝ ֆորմալ և ոչ ֆորմալ,21-րդ դարի հմտություններ	տնօրեն,համակարգող,տնօրենի տեղակալ	2023-2028	Վերապատրաստող կազմակերպությունների հետ պայմանագրեր	Պետական բյուջե	Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ
2. Ներդնել աշխատակազմի գնահատման սանդղակը	տնօրեն, տնօրենի տեղակա,Մ/մ ղեկավարներ	2023 -2028	Գնահատման սանդղակ		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
3.Տարածել փորձառու ուսուցիչների առաջավոր փորձը	տնօրեն,տնօրենի տեղակալ	2023-2028	տեսանյութեր,տեսադասեր, հոդվածներ		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ
4. Ուսուցիչները՝ ուսուցիչներին ,մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով ստեղծել միջոցառական մեթոդ-միավորում	տնօրեն,տնօրենի տեղակալ,Մ/մ նախագահներ	2023-2028	հեռավար և առկա միջոցներ		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ
5.Դպրոցի ներքին կարգապահական կանոններում ավելացել հավելված. ուսուցչի բարեվարքության կանոնները	տնօրեն,տնօրենի տեղակալ,Մ/մ նախագահներ	2023-2028	հավելված		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ

1.6. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՅՏ և ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Covid 19-ով պայմանավորված՝ հանրակրթական դպրոցը քայլ առ քայլ սկսեց հարմարվել առցանց ռեժիմին: Ուսուցիչների առջև բացվեց կրթական հարթակների և կրթական ծառայությունների լայն շրջանակ, որը թույլ է տալիս ստեղծել դասընթացներ, կիրառել առցանց գործիքներ և իրականացնել առցանց գնահատում:

ՏՅՏ տեխնոլոգիաների կիրառումը մեր դպրոցում իրականացվում է հետևյալ ուղղություններով.

1.Կառավարում-

ա/տնօրենի և կառավարման մարմինների միջև կապը իրականանում է Էլեկտրոնային կայքի, փոստի միջոցով. մասնավորապես

Կառավարություն հետ – **gov.am** կայքի միջոցով

2021-2022 ուսումնական տարվանից սկսված հիմնական կրթության վկայականները ձևավորվում ենք Էլեկտրոնային եղանակով
բ/ ԿԳՄՍՆ-ի հետ իրականանում է **secretariat.escs** կայքի միջոցով, ուսումնական տարվա ընթացքում լիցենզավորման վերաբերյալ հաշվետվությունները, 120-ից 200 ժամ բացակայությունները, քննության օրերը, ուսուցչի թափուր տեղի մասին հայտարարությունները պարբերաբար ուղարկում ենք Էլեկտրոնային եղանակով:

գ/Լիազորված մարմնի հետ իրականանում է

<https://mul2-kotayk.gov.am/> , krtutyun1@gmail.com, mail.schools.am Էլեկտրոնային միջոցներով և տելեգրամի միջոցով:

դ/Կառավարման խորհրդի և խորհրդակցական մյուս մարմինների հետ կապը իրականանում է Viber հավելվածի միջոցով

Դպրոցը ձևավորել է Էլեկտրոնային ձևաթղթեր:

Դպրոցում պարտադիր գործածության մեջ են երաշխավորված Էլեկտրոնային փաստաթղթերը, դրանք տեղադրված են lib.armedu.am կայքում

2.Ուսումնադաստիարակչական-

ՏՅՏ-ի օգտագործումը ուսումնադաստիարակչական գործընթացում մեզ հնարավորություն է տալիս.

- Կազմել աշխատանքային ծրագրեր կամ ներբեռնել ԿՁՆԱԿ-ում տեղադրված նյութերից

- Կազմել թեմատիկ պլանավորում կամ ներբեռնել ԿՁՆԱԿ-ում տեղադրված նյութերից

- Ստեղծել դիդակտիկ նյութեր

- Պատրաստել սահիկներ՝ Power Point, Sway, Google Slides, Prezi գործիքների միջոցով

- Ստեղծել ուսումնական տեսանյութերի հավաքածուներ՝ Google Doc

- Իրականացնել հարցումներ և թեստեր՝ Google Quiz, Socrative, Mentimeter, Onlayn Test Pad

- Կազմել ինտերակտիվ վարժություններ դասընթացների համար՝ Lerningapps.org, Wordwall

Covid 19-ով պայմանավորված շատ է օգտագործվել Zoom ծրագիրը, որը աշխատում էր անվճար ռեժիմով և ժամանակի սահմանափակումով: Հետագայում

ԿՏԱԿ-ի կողմից պատրաստված MS Teams և Google Classroom ուսուցման կառավարման համակարգերը օգտագործվեցին հեռավար դասերի

կազմակերպման համար, իսկ ներկայումս օգտագործվում են ուսուցիչների վերապատրաստման գործընթացները կազմակերպելու համար:

- դասի պլանավորման համար օգտագործվում են Mind Map առցանց գործիքը

- առցանց գնահատման համար օգտագործվում են Kahoot, OnlinetestPad գործիքները

- Ներառող դասավանդման համատեքստում օգտագործվում է Google Drive

Ուսումնադաստիարակչական նպատակներով ստեղծված ԿՏԱԿ-ը, ԿՁՆԱԿ-ը, ԴՇՀՀ, „Պաշարների շտեմարանը“, „Հայկական կրթական միջավայրը“ համարվում

են ուսումնական հաստատության աշխատանքային և ամենօրյա կիրառման հարթակներ:

„Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի” միջոցով իրականանում է ուսումնական ամբողջ գործընթացը.

. ուսուցիչները կատարում են գնահատում

. տեղադրում են առարկայական թեմատիկ պլանները

. լրացում են էլեկտրոնային մատյանը

. կիսամյակի վերջում ձևավորում են կիսամյակային գնահատականները

. լրացում են ուսումնական խմբակի, նախագծի մատյանները

Ուսումնական գործընթացի վերլուծությունը կատարվում է Word, Excel համակարգչային ծրագրերի միջոցով

3. Վարչատնտեսական-

SՏՏ-ի օգտագործումը հնարավորություն է տալիս „ԴԿՏՅ”-ում ձևավորել

. դասարաններ

. իրականացնել սովորողների ընդունելությունը, տեղափոխումը այլ դպրոց կամ երկիր, շարժը, անավարտ ուսումնառությունը

. հաստիքացուցակը, նրա հիման վրա ինքնաշխատ եղանակով էլեկտրոնային տարիֆիկացիան

. տեղեկատվություն անձնակազմի, դպրոցի, հարակից տարածքների մասին

. ուսումնական պլան, խմբակներ


. երկարորյա և նախագծային աշխատանքների մասին տեղեկատվություն

. գործածության մեջ մտնող դասագրքերի մասին տեղեկատվություն

„Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի” matyan.emis.am հարթակի վարչական մասով իրականում է ամբողջ ուսումնական գործընթացի վերահսկողությունը տնօրենի և տնօրենի տեղակալի կողմից:

Տնտեսական գործընթացները ևս իրականանում են ՏՏՏ ծրագրերի միջոցով. ԶԾ և Client Bank, Զարկային դաշտ, էլեկտրոնային շտեմարան:

2023-2024 ուսումնական տարում, հաշվի առնելով, որ դպրոցի պաշտոնական կայքը ունի սահմանափակ հիշողության տիրույթ, google ինտերնետային հարթակում ստեղծել եմ կայք, որը հնարավորություն կտա ՏՀՏ գործիքներով ստեղծած բոլոր ուսումնական նյութերը պահպանել և ստեղծել բազա, ներկայացնել մանկավարժների, աշակերտների կատարած աշխատանքները, ձեռքբերումները, հաջողությունները: Կից ներկայացնում եմ կայքի հղումը https://sites.google.com/d/1LsI9xx6dX-lv-KxtAmGvIF02VYRaCFVz/p/15vkp_PZTc_H9uC2beldWATzw65zF1nM5/edit?pli=1 և նկարը.



ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՅՏ և ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ


ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1. Համակարգչային կաբինետ ինտերակտիվ գրատախտակով՝ ինտերակտիվ դասեր կազմակերպելու, տեսանյութեր, տեսաֆիլմեր, ՏՅՏ գործիքներով ինտերակտիվ ուսումնական նյութեր կազմելու, ինտերակտիվ ուսումնական նյութերից օգտվելու հնարավորություն	1. Համակարգիչների թիվը բավարար չէ, 28 դասասենյակից կա երեք դասասենյակում
2. Ուսուցիչները և սովորողները ազատորեն օգտվում են emis.am, ktak.am, dshh.am, elerning.am https://esource.armedu.am/ հարթակներից	2. Պրոեկտորների թիվը ևս բավարար չէ
3. Ուսուցիչները և սովորողները տիրապետում են Moodle հարթակին, Canva, Quiziz, Lernings.apps ՏՅՏ գործիքներին	3. Բոլոր դասերը համակարգչային դասասենյակում հնարավորություն չունենք կազմակերպելու
4. Ինֆորմատիկա առարկայի առանձին կաբինետ ունենք՝ 10 համակարգչով և 7 դյուրակիր համակարգչով	4. Կան ուսուցիչներ, ովքեր դեռ պատրաստ չեն ինքնուրույն ստեղծելու ուսումնական նյութեր
5. Երկրորդ դասարաններում թվային գրագիտություն առարկայի ներդրմամբ պայմանավորված ունենք երեք դասասենյակ երեք պրոեկտորով, երեք համակարգչով և մարկերային գրատախտակով	5. Ինտերնետ տիրույթը չի ընդգրկում ամբողջ դպրոցի տարածքը
6. Ունենք անվճար ինտերնետային կապ համակարգչային, ինֆորմատիկայի կաբինետում և աշխատասենյակներում՝ ընդունարանում, տնօրենի, տնօրենի տեղակալների, գրադարանավարի և Ախ-ի:	6. Էլեկտրոնային գրատախտակի ծրագրային փոփոխությունը 2020թ-ից Microsoft-ի կողմից առաջացրել է խնդիրներ. չենք կարողանում օգտագործել ինտերակտիվ ֆունկցիան
7. „ԱՐՄԱԹ“ լաբորատորիան հնարավորություն է տալիս սովորողներին տիրապետելու տարբեր ծրագրերի, մասնակցել մրցույթների	
8. Մեր դպրոցի աշակերտների կողմից ստեղծվել է „Էլեկտրոնային բանալի“ ծրագիրը, որը կյանքի կոչվի ֆինանսական ներդրումներ կատարելու միջոցով	
9. Ունենք ևս մեկ պրոեկտոր, որը օգտագործվում է միջոցառումներին, կարող է տեղափոխվել դասարանից դասարան	
10. Ունենք նաև 6 համակարգիչ և 2 դյուրակիր համակարգիչ, որոնք գտնվում են աշխատասենյակներում	
11. Ունենք „Ամերիկյան անկյուն“, որտեղ կա հեռուստացույց և երեք համակարգիչ:	
12. Ամեն տարի դպրոցում հայտարարում ենք „Մեդիագրագիտության“ շաբաթ	
13. „Ապահով համացանց“ միջազգային մրցույթում երկու տարի անընդմեջ հաղթանակ ենք գրանցել՝ ստանալով հավաստագիր	
14. etwinning հարթակում մեր ուսուցիչները սովորողների հետ միասին կիրառում են Web2,0 գործիքը	
15. Ունենք պաշտոնական և ոչ պաշտոնական կայք, սոցիալական կայք, էջ	

5. ՈԼՈՐՏԸ՝ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ/տես նաև ՆԱԽԱԳԻԾ 3/ ՆՊԱՏԱԿԸ՝ Կրթության որակի բարելավումը ՏՀՏ սարքավորումների, ՏՀՏ գիտելիքներով զինված մանկավարժական և աշակերտական համակազմի միջոցով ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ 1. Համալրել դասասենյակները ՏՀՏ սարքավորումներով 2. Ձարգացնել մանկավարժական համակազմի ՏՀՏ կիրառման հմտությունները 3. Ձարգացնել սովորողների ՏՀՏ կիրառելու հմտությունները ՌԻՍԿԵՐԸ՝ 1. Ֆինանսական մեծ ծախսերը 2. Մանկավարժական համակազմի տարեց ուսուցիչների չմոտիվացված լինելը 3. Սովորողների կողմից ՏՀՏ գիտելիքները և հմտությունները ոչ արդյունավետ օգտագործելը ՌԻՍԿԵՐԻ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆՆ ԼՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ 1. Օրենքով չարգելվող միջոցների որոնում 2. Մանկավարժական համակազմի գնահատման սանդղակը կիրառել, հետևաբար խրախուսել 3. Սովորողներին ներգրավվել կրթական ռեսուրսներ ստեղծելու աշխատանքներում					
Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
1. Գնել համակարգիչներ, պրոեկտորներ և մարկերային գրատախտակ	Համակարգող, հաշվապահ, գնումների համակարգող, տնտեսվար, դասղեկներ	2024 երեք դասարան 2025 երեք դասարան 2026 երեք դասարան 2027 երեք դասարան 2028 երեք դասարան	12 համակարգիչ, 12 պրոեկտոր, 12 մարկերային գրատախտակ 10 դյուրակիր համակարգիչ	Պետական բյուջե	Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ
2. Ինֆորմատիկայի և էլեկտ. կառ. և դասավանդման մասնագետների վերապատրաստում	տնօրեն, համակարգող	2024 հունվար-փետրվար	պայմանագիր վերապատրաստող կազմակերպության հետ	Պետական բյուջե	Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ
2. Մանկավարժական համակազմի ՏՀՏ կարիքի գնահատում անցկացնել	տնօրեն, տնօրենի տեղակալ, ինֆորմատիկայի ուսուցիչ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետ	2023 նոյեմբեր	Google Forms		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
3. Կարիքի գնահատման հիման վրա իրականացնել վերապատրաստումներ	տնօրեն, տնօրենի տեղակալ, ինֆորմատիկայի ուսուցիչ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետ	2023-2028	տեսանյութեր, տեսադասեր, հոդվածներ		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
4. Սովորողների կողմից կատարված նախագծային, գործնական աշխատանքների գնահատման գործիքակազմում ներառել ՏՀՏ կիրառման բաղադրիչը	տնօրեն, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ	2023-2028	հեռավար և առկա միջոցներ		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ


Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար

Դասարանների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխություն ների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	3	3	2	3	աճ
2-րդ դասարան	3	3	3	3	անփոփոխ
3-րդ դասարան	3	3	3	3	անփոփոխ
4-րդ դասարան	3	3	3	3	անփոփոխ
5-րդ դասարան	3	3	3	3	անփոփոխ
6-րդ դասարան	4	3	3	3	անփոփոխ
7-րդ դասարան	3	4	3	3	աճ, նվազում
8-րդ դասարան	3	3	4	3	աճ, նվազում
9-րդ դասարան	3	3	3	4	աճ
Ընդամենը	28	28	27	28	աճ



Աղյուսակ 2.Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Սովորողների թիվը	2021-2022 ուստարի	2022–2023 ուստարի	2023–2024 ուստարի	Փոփոխություններ իդինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	93	74	81	աճ
2-րդ դասարան	89	97	77	նվազում
3-րդ դասարան	96	91	96	աճ
4-րդ դասարան	91	97	89	նվազում
5-րդ դասարան	84	97	99	աճ
6-րդ դասարան	97	89	98	աճ
7-րդ դասարան	112	100	90	նվազում
8-րդ դասարան	84	111	99	նվազում
9-րդ դասարան	91	83	108	աճ
Ընդամենը	837	839	837	աճ, նվազում



Սովորողների թվի կայուն աճը բացատրվում է ծնողական համայնքի կողմից դպրոցի նկատմամբ մեծ վստահությամբ, ինչը պայմանավորված է դպրոցում առկա բարձր կարգապահությամբ, արդեն ձևավորված ավանդույթներով, ծնողների դրամահավաքի իսպառ բացառումով, ուսման որակի նկատմամբ մշտական վերահսկողությամբ, ուսուցչական անձնակազմի քրտնաջան, պահանջկոտ աշխատանքով, աշակերտակենտրոն աշխատանքի կազմակերպումով, դպրոցը կազմող բոլոր օղակների համագործակցային և թիմային աշխատանքով ըստ տարածված տեղեկատվության: Համայնքում մեծ է դպրոցի հեղինակությունը, համայնք տեղափոխված բնակիչների զգալի մասը նախընտրում են իրենց երեխաների կրթությունը շարունակել մեր դպրոցում: Անկախ արտագաղթից, անընդհատ այլ համայնքներից դպրոց են ընդունվում մեծ թվով աշակերտներ: Աշակերտների թվի ավելացումը կախված է նաև Արցախի Հանրապետությունից մեր քաղաք եկած ընտանիքների երեխաների համալրումով: Դպրոց նոր ընդունված աշակերտները և նրանց ծնողները հեշտությամբ ինտեգրվում են և դառնում դպրոցի մեկ մասնիկը:

Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ նախորդ 3 ուստարիների համար

Ցուցանիշը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1- ի դրությամբ	816	837	832	նվազում
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	845	838	839	աճ
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	108	63	45	նվազում
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	95	54	29	նվազում

Վերջին ուսումնական տարիներին դուրս գրված սովորողների մեծ մասը տեղափոխվել է ուրիշ բնակավայրեր, կան սովորողներ, ովքեր արտագաղթել են ընտանիքներով հանրապետությունից, կան նաև նոր ընդունված սովորողներ, ովքեր եկել են մյուս դպրոցներից կամ Ռուսաստանի Դաշնությունից:

6. ՈԼՈՐՏԸ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ /տես նաև ՆԱԽԱԳԻՃ 5/

ՆՊԱՏԱԿԸ՝ համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորում

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- 1. Համակողմանիորեն բարելավել ուսումնական գործընթացը
- 2. Սերմանել հայրենասիրություն, մարդասիրություն, պետականության ոգի
- 3. Նպաստել մասնագիտական կողմնորոշման ձևավորմանը

ՌԻՍԿԵՐԸ՝

- 1. Մոտիվացիայի պակասը
- 2. Անընդհատ զարգացող համակարգչային խաղերը, զբաղմունքները
- 3. Շրջապատող միջավայրը

ՌԻՍԿԵՐԻ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆՆ ԵՎ ԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԿԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- 1. Ծնողների ներգրավվում սովորողների ուսուցման գործընթացում
- 2. Համակարգչային հմտությունները կիրառել ուսումնական գործընթացում
- 3. Սովորողների ներգրավվել արտադպրոցական միջոցառումներում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
1. Զափորոշչով սահմանված 8 կարողունակությունների ձևավորմանն ուղղված աշխատանքներ	տնօրեն, տնօրենի տեղակալ, ուսուցիչներ	2023-2028			Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
2. Սովորողներին ներգրավվել հայրենասիրական, մարդասիրական միջոցառումներում/ներդպրոցական և արտադպրոցական	տնօրեն, համակարգող	2023-2028	տրանսպորտային	պետական բյուջե	Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
3.Բազմակարծիք,մասնակցային, ներառական միջավայրի ապահովում	տնօրեն,տնօրենի տեղակալ,վարչատնտեսական համակարգող,հաշվապահ հոգեբան,ԴԱԿ,	2023-2028 պարբերաբար	հարմարավետ միջավայր, դիդակտիկ նյութեր, խելամիտ հարմարեցումներ	պետական բյուջե	Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ
4. Օլիմպիադաներում և տարբեր հարթակներում հաջողություններ գրանցած սովորողների խրախուսում	տնօրեն,տնօրենի տեղակալ, վարչատնտեսական համակարգող,հաշվապահ	2023-2028 պարբերաբար	պատվոգրեր,մրցանակներ	պետական բյուջե	Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
5. Աջակցություն ցուցաբերել „Մասնագիտական կողմնորոշման” խմբակների` հրավիրելով տարբեր մասնագետների	տնօրեն, տնօրենի տեղակա,կրթական աջակցությունների գծով համակարգող,հոգեբան	2024 հունվար	անհատական բաղադրիչ	պետական բյուջե	Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ
6.Ճարուևակել յուրաքանչյուր երկուշաբթի ՀՀ պետական օրհներգով դասապրոցեսը սկսելու ավանդույթը	տնօրեն, կրթական աջակցությունների գծով համակարգող,ԴԱԿ	2023-2028	տեսանյութեր,տեսադասեր, հոդվածներ		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ
7. Ճարուևակել „Ազգային երգ ու պար` առարկայի ուսուցումը	տնօրեն, կրթական աջակցությունների գծով համակարգող,ուսուցիչ	2023-2028	դպրոցական բաղադրիչ	պետական բյուջե	Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ

1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ չափորոշիչ) սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, տարրական, հիմնական եւ միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական պահանջները եւ սովորողների գնահատման համակարգը:

Չափորոշիչի նորմերն ու դրույթները պարտադիր են Հայաստանի Հանրապետության կրթության կառավարման մարմինների, տարրական, հիմնական եւ միջնակարգ ընդհանուր, հատուկ եւ մասնագիտացված հանրակրթական ծրագրեր (այսուհետ՝ հանրակրթական ծրագրեր) մշակողների եւ իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ու սեփականության ձևերից եւ ենթակայությունից:

3. Հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան՝

1) մշակվում են պետական եւ այլընտրանքային հանրակրթական ծրագրերը.

2) փորձաքննության են ենթարկվում հաստատման ներկայացված այլընտրանքային հանրակրթական ծրագրերը.

3) կազմակերպվում են հանրակրթական ծրագրերի իրականացումը եւ դրա պետական վերահսկողությունը.

4) գնահատվում են հանրակրթության արդյունքները:

Կրթության բովանդակության նորացման հիմնախնդիրները լուծվում են չափորոշչահեն կրթությամբ: Ներկայումս աշխարհի շատ երկրներում կրթության նորովի կազմակերպման ռազմավարություն է հանդիսանում կարողունակությունների (կոմպետենցիաներ) վրա հիմնված կրթությունը: **Այն իրենից ներկայացնում է գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների համակարգ, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ:** Մանկավարժների մասնագիտական պատրաստվածությամբ և հմտություններով է պայմանավորված, թե ինչպիսի կարողունակություններով օժտված քաղաքացիներ կձևավորվեն հանրակրթական ուսումնական հաստատություններում, ուսումնառության ավարտին : Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով է ուսուցիչը կարողունակ գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման հարցերում և որքանով է կարողանում բավարարել չափորոշչային պահանջները:

Կրթության որակը՝ ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության համաձայն՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք է, որը գնահատվում է՝ հաշվի առնելով

1.սովորողի անհատական կարիքները


2.կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը

3 կրթության կազմակերպման գործընթացը

4. ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների:


ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ


	2018- 2019	2019- 2020	2020- 2021	2021- 2022	2022- 2023
Առաջադիմություն	100%	100%	100%	100%	99,5%
Որակական ցուցանիշը	31%	34,1%	32%	32%	32,4%



Ուսումնական հաստատությունների և գործունեությունների արդյունավետությունը
Տվյալներ սովորողներին ուսումնառություն արդյունքների 2022-2023 ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	Սովորողներին թիվը		Պետական պարտադիր շառկաների ցտարեկան գնահատականներին միջինը			4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարաններում պետական ավարտական քննություններին միավորների միջինը	
	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.	12-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.
Մայրենի	97		8			8	
Հայոց լեզու		83		5			12
Մաթեմատիկա	97	83	7			7	13
Ռուսաց լեզու	97	83	7	6			12
Անգլերեն	97	83	7	7			13
Ես և շրջ. աշխ.	97		7				
Երաժշտություն	97		8				
Կերպարվեստ	97		9				
Տեխնոլոգիա	97		9				
Ֆիզկուլիտը	95	80	9	9			8
Շախմատ	97		8				
Գրականություն		83		6			12
Հայոց պատմ.		83		6			11
Համաշխ. պատմ.		83		6			
Հասարակագիտ.		83		7			
ՀԵՊ		83		7			
Աշխարհ.		83		6			11





Տվյալներ սովորողների ուսումնառությամբ արդյունքների վերաբերյալ նախորդ ուստարում

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը		Հիմնական առարկաներից տարեկան գնահատականներին միջինը			4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը	
	4-րդ դաս.	9-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.	12-րդ դաս.	4-րդ դաս.	9-րդ դաս.
Մայրենի	93		8			8	
Հայոց լեզու		91		6			13
Մաթեմատիկա	93	91	7			7	13
Ռուսաց լեզու	93	91	7	6			6
Անգլերեն	93	91	7	7			7
Ես և շրջ. աշխ.	93		7				
Երաժշտություն	93		8				
Կերպարվեստ	93		9				
Տեխնոլոգիա	93		9				
Ֆիզկուլտուրա	92	89	9	8			7
Շախմատ	93		7				
Գրականություն		91		6			6
Հայոց պատմ.		91		6			5
Համաշխ. պատմ.		91		6			
Հասարակագիտ.		91		7			

9-րդ դասարաններում քննությունների արդյունքների փոփոխության դինամիկան կազմվել է հաշվի առնելով ընթացիկ ուսումնական տարվա բանավոր քննությունների 20 միավորային սանդղակի և նախորդ ուսումնական տարվա 10 միավորային սանդղակի համապատասխանեցումները:

Տարեկան միջին գնահատականների և քննությունների միջին միավորները դիտարկելիս՝ հարկ է նշել, որ օրինակ «Քիմիա» և «Ֆիզիկա» ուսումնական առարկաներից քննության միջին միավորը ձևավորվել է քննական առարկայի ընտրության հնարավորությամբ՝ համապատասխանաբար 1 սովորող և 6 սովորող:

Տվյալներ սովորողներին առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 2 ուստարիների համար՝ ըստ կրթական աստիճանների

Ցուցանիշ	2020-2021 ուստարի			2021-2022 ուստարի			2022-2023 ուստարի	
	1-ից 4-րդ. դաս.	5-ից 9-րդ. դաս.	10-ից 12-րդ. դաս.	1-ից 4-րդ. դաս	5-ից 9-րդ. դաս.	10-ից 12-րդ. դաս	1-ից 4-րդ. դաս	5-ից 9-րդ. դաս.
Գերազանց առաջադիմությամբ սովորողներ թվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը.տվյալ կրթական աստիճանում «9» և «10»տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	59 16%	32 7%		42 11%	21 4%		56 16%	27 6%
Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը.տվյալ կրթական աստիճանում «4»,«5»և «6»տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	218 59%	345 77%		231 62%	346 74%		202 56%	382 80%
Ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների (հաշվարկ.տարրական , հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական դասարաններում քննություններին ցդրական տարեկան գնահատական ստացածների հարաբերությունը քննական աստիճանների	99%	100%		100%	100%		100%	100%

Հիմնական դպրոցն ավարտած սովորողներին անհատական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատությունները նդունվածներին թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ .հիմնական դպրոցի շրջանավարտներին անհատական և միջին մասնագիտական հաստատությունները նդունվածներին թվի հարաբերությունը 9-րդ դասարանի սովորողներին ընդհանուր թվին`տոկոսային արտահայտությամբ)		27 36%			31 34%		44 53%
Հիմնական դպրոցն ավարտած սովորողներին թիվը և տոկոսը ,որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում (տոկոսի հաշվարկ .հիմնական դպրոցի շրջանավարտներին ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում ուսումը շարունակողներին թվի հարաբերությունը 9-րդ դասարանի սովորողներին ընդհանուր թվին`տոկոսային արտահայտությամբ)		45 61%			59 64%		39 47%

Դպրոցի սովորողների առաջադիմությունը արտացոլում է նրանց իրական գիտելիքները: Գնահատականները արհեստականորեն չեն ուռճացվում: Սովորողների գերազանց առաջադիմության տոկոսն ավելի բարձր է տարրական դասարաններում, ինչը պայմանավորված է նաև տարրական դասարաններում սովորողների ծնողների հետևողականությամբ:

2020-2021 ուսումնական տարվա համեմատությամբ 2021-2022 ուսումնական տարում նվազել է գերազանց առաջադիմության տոկոսը,պատճառը կապված է ր էլեկտրոնային մատյանի լիարժեք գործածության մեջ մտնելու և եռօրյա ժամկետի պահպանման հետ : 2022-2023 ուսումնական տարում բարձրացել է:

Ուսումնական դժվարություններ ունեցող սովորողների հետ ուսուցիչներն անց են կացվում շերտավորված ուսուցում դասերի ընթացքում և լրացուցիչ անվճար աշխատանքներ` դասերից հետո:

Սովորողների առաջադիմության բարելավման ուղղությամբ տարվում են հետևողական աշխատանքներ սովորողների և նրանց ծնողների հետ:

Կրթության որակի կարևոր գնահատման կարևոր բաղադրիչներից է նաև հանրակրթական պետական չափորոշյին պահանջներին սովորողների համապատասխանության ստուգումը` մնացորդային գիտելիքների արդյունքներ: Ստորև ներկայացնում եմ 2023-2024 ուսումնական տարվա սեպտեմբեր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների մասին հաշվետվություն.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԱՆՎԱՆ

N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«ՀԱՆՐԱՀԱՇԻՎ» ԵՎ «ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ»/9-րդ դասարաններ/

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ ԱՆՑԿԱՅՎԱԾ

ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ


ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբեր ամսվա ընթացքում դպրոցի 9-րդ դասարաններում անց է կացվել մնացորդային գիտելիքների ստուգում տնօրենության կողմից «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» ուսումնական առարկաներից, որի նպատակն էր պարզել սովորողների մնացորդային գիտելիքները նշված առարկաներից: Մնացորդային գիտելիքների ստուգումը իրականացվել է 2023թ.-ի սեպտեմբերի 18-ից մինչև 29-ը: Այդ ընթացքում ԿԶՆԱԿ-ի կողմից առաջարկվող նմուշների հիման վրա կազմվել են գրավոր աշխատանքների 3-ական տարբերակներ յուրաքանչյուր առարկայի համար և ներկայացվել տնօրենի հաստատմանը: Աշխատանքները կազմակերպվել են դասասենյակներում՝ դասավանդող ուսուցչի ներկայությամբ, այդ նպատակով իմ կողմից իրականացվել է գրավոր աշխատանքի 8 դասալսում: Գրավոր աշխատանքների ստուգումը կազմակերպվել է դասավանդող ուսուցիչների կողմից: Կատարվել է արդյունքների վերլուծություն, որի ընթացքում բացահայտվել են սովորողների գիտելիքների որակը: Ուսուցիչները ծանոթացել են ստուգման արդյունքներին:

IX դասարաններում «Հանրահաշիվ» ուսումնական առարկայի մնացորդային գիտելիքների ստուգմանը մասնակցած 95 սովորողներից «անբավարար» է գնահատվել 36-ը (38%), «բավարար» 49-ը (52%), «լավ» 9-ը (9%), «գերազանց» 1-ը (1%): Միջին գնահատականը կազմել է 4 միավոր (10 միավորային սանդղակում):


Հանրահաշիվ IX դաս./մնացորդային գիտ. ստուգում/



Գնահատական	Հանրահաշիվ IX դաս./մնացորդային գիտ. ստուգում/			
	9Ա	9Բ	9Գ	9Դ
10				
9				1
8		2		
7	3		3	1
6	1	2	3	3
5	4	5	1	4
4	2	9	10	5
3	5	2	4	4
2	4		2	4
1	3	3	3	2
Մասնակցած սով. քանակ	22	23	26	24

Հանրահաշիվ IX դաս.	
Գերազանց	1
Լավ	9
Բավարար	49
Անբավարար	36

IX դասարաններում «Երկրաչափություն» ուսումնական առարկայի մնացորդային գիտելիքների ստուգմանը մասնակցած 96 սովորողներից «անբավարար» է գնահատվել 43-ը (45%), «բավարար»՝ 38-ը (40%), «լավ»՝ 9-ը (9%), «գերազանց»՝ 6-ը (6%): Միջին գնահատականը կազմել է 3.93 միավոր (10 միավորային սանդղակում)



Գնահատական	Երկրաչափություն IX դաս./մնացորդային գիտ. ստուգում			
	9Ա	9Բ	9Գ	9Դ
10				
9			3	3
8	1	2	1	
7	2		1	2
6	1	2	1	3
5	2	1	4	2
4	3	9	6	4
3	1	1	6	2
2	8	3	5	2
1	5	6		4
Մասնակցած սով. քանակ	23	24	27	22

Ստորև բերված են տնօրենության կողմից անցկացված մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքները «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» /9-րդ դասարաններ/ ուսումնական առարկաներից ըստ դասարանների.

Դասարան	Առարկա	Միջին գնահատական	Որակական ցուցանիշ	Առաջադիմություն
IXԱ	Հանրահաշիվ	3.7	13.6%	45.5%
IXԲ		4.26	8.7%	78.3%
IXԳ		4	11.5%	65.4%
IXԴ		4	8.3%	58.3%
IXԱ	Երկրաչափություն	3.22	13%	39.1%
IXԲ		3.5	8.3%	58.3%
IXԳ		4.44	18.5%	59.3%
IXԴ		4.5	22.7%	63.6%

Մտահոգիչ են հատկապես միջինում 4-ից ցածր գնահատականները, կարիք կա նպատակաուղղված աշխատանք տանել և լրացնել սովորողների բաց թողնվածը: Անհրաժեշտ է աշխատանքներն առաջիկայում այնպես կազմակերպել, որպեսզի սովորողները հնարավորինս լավ արդյունքներ ունենան առաջիկա ավարտական քննություններում: Իսկ դա հնարավոր է միայն նպատակաուղղված աշխատանքի միջոցով:

Համակողմանի վերլուծության նպատակով ներկայացված են նաև դիտարկվող դասարաններում նախորդ ուսումնական տարվա տարեկան գնահատականները «Հանրահաշիվ» ուսումնական առարկայից: Նախորդ ուսումնական տարվա նշված դասարանների «Հանրահաշիվ» ուսումնական առարկայից տարեկան գնահատականներն ունեն հետևյալ պատկերը. 111 սովորողներից «անբավարար» է գնահատվել 2-ը (2%), «բավարար»՝ 71-ը (64%), «լավ»՝ 28-ը (25%), «գերազանց»՝ 10-ը (9%):

Հանրահաշիվ, մն. գիտ. ստուգում		Հանրահաշիվ, նախորդ ուս. տարվա տարեկան գնահատականներ	
Գերազանց	1	Գերազանց	10
Լավ	9	Լավ	28
Բավարար	49	Բավարար	71
Անբավարար	36	Անբավարար	2

Համադրելով արդյունքները նկատելի է դառնում, որ սովորողների գիտելիքները կայուն չեն, իսկ գնահատականները՝ երբեմն ուռճացված:

Անհրաժեշտ է աշխատանք տանել սովորողների գիտելիքների կայուն որակ ապահովելու և պետական չափորոշչին համապատասխան գնահատում իրականացնելու ուղղությամբ:

Մնացորդային գիտելիքների արդյունքները նախորդ ուսումնական տարվա տարեկան գնահատականների համադրամբ դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ մնացորդային գիտելիքների ստուգման գնահատականները մեկ գրավոր աշխատանքի արդյունքներ են, իսկ տարեկան գնահատականները ձևավորվում են 1-ին և 2-րդ կիսամյակների գնահատականների միջինացման արդյունքնում և արտացոլում են ոչ միայն սովորողների գիտելիքներն, այլ նաև ամբողջ ուսումնական տարվա ընթացքում սովորողների առաջադիմությունը՝ ձեռքբերումներն ու դժվարությունները:

Ստորև ներկայացնում եմ նաև 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների 4-րդ և 9-րդ դասարաններում կրթության որակի համեմատականը.

. 4-րդ դասարաններում հիմնական առարկաներից տարեկան գնահատականները հիմնականում պահպանվել են,ունենք միայն նվազում „Անգլերեն” ուսումնական առարկայի պարագայում

.4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման միջին գնահատականը բարձրացել է <<Մայրենի>>առարկայից,իսկ <<Մաթեմատիկա>> առարկայից՝ պահպանվել

.9-րդ դասարանում հիմնական առարկաներից տարեկան միջին գնահատականները չեն պահպանվել <<Համաշխ.պատմություն>>, <<Աշխարհագրություն>>՝

<<Երկրաչափություն>>,<<Ինֆորմատիկա>>,<<Ֆիզիկա>>,<<Քիմիա>>,<<ՆԶՊ>>առարկաներից, պահպանվել են <<Հայոց լեզու>>,<<Ռուսաց լեզու>>,<<Անգլերեն>>,<<ՀԵՊ>>,<<Հանրահաշիվ>> և <<Կենսաբանություն>> ուսումնական առարկաներից

.9-րդ դասարանում պետական ավարտական քննությունների միջինմիավորը պահպանվել է <<Հայոց լեզու>.,<<Գրականություն>>,<<Աշխարհագրություն>>,<<Կենսաբանություն>> ուսումնական

առարկաներից,չի պահպանվել ՝ <<Մաթեմատիկա>>,<<Ռուսաց լեզու>>, <<Անգլերեն>>,<<Ֆիզկուլտուրա>>,<<Հայոց պատմություն>>,<<Ֆիզիկա>> և <<Քիմիա>> ուսումնական առարկաներից: Շեղումները փոքր են:

Հարկ է նշել,որ բանավոր քննություններ 2022-2023 ուսումնական տարում գնահատվել են <<10>>միավորայի համակարգով՝ ի տարբերություն նախորդ տարվա:

2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիներին համեմատական						
Հիմնական առարկան եր	Սովորող ներին թիվը		Հիմնական առարկաներից տարեկան գնահատականներ իմիջինը		4-րդ դասարանում գիտելիքներին ստուգման և 9-րդ դասարաններում պետական ավարտակ քննություններին ընդունվողների միավորներին	
	4- րդ . դաս .	9- րդ . դաս .	4-րդ . դաս .	9-րդ . դաս .	4-րդ . դաս .	9- րդ . դաս .
Մայրենի	90		8		7	
Հայոց լեզու		74		6		13
Մաթեմատիկա	90		7		7	11
Ռուսաց լեզու	90	74	7	6		13
Անգլերեն	90	74	8	7		12
Եսև 2 քա.	90		7			
Երաժշտու թյուն	90		8			
Կերպարվեստ	90		9			
Տեխնոլոգիա	90		9			
Ֆիզկուլտ ուրա	90	71	9	8		8
Շախմատ	90		7			
Գրականու թյուն		74		6		12
Հայոց պատմ.		74		6		12
Համաշխ. դատմ.		74		7		
Հասարակագիտ		74		7		
Հեղ		74		8		
Հայաստանի աշխ.		74		6		

Հիմնական առարկաներ	Սովորողներին թիվը		Հիմնական առարկաներից տարեկան գնահատականներ իմիջինը		4-րդ դասարանում գիտելիքներին ստուգման և 9-րդ դասարաններում պետական ավարտակ քննություններին ընդունվողների միավորներին	
	4- րդ . դաս .	9- րդ . դաս .	4-րդ . դաս .	9-րդ . դաս .	4-րդ . դաս .	9-րդ . դաս .
Մայրենի	93		8		8	
Հայոց լեզու		91		6		13
Մաթեմատիկա	93	91	7		7	13
Ռուսաց լեզու	93	91	7	6		6
Անգլերեն	93	91	7	7		7
Եսև 2 քա.աշխ.	93		7			
Երաժշտու թյուն	93		8			
Կերպարվեստ	93		9			
Տեխնոլոգիա	93		9			
Ֆիզկուլտ ուրա	92	89	9	8		7
Շախմատ	93		7			
Գրականու թյուն		91		6		6
Հայոց պատմ.		91		6		5
Համաշխ. պատմ.		91		6		
Հասարակագիտ.		91		7		
Հեղ		91		8		
Աշխարհ.		91		7		13
Երկրաչ.		91		6		
Հանրահաշիվ		91		6		
Ինֆորմ.		91		7		
Ֆիզիկա		91		6		14
Քիմիա		91		6		15

**Տվյալներ մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում
մարզական, մշակույթի ոլորտում մատենդ ծագործական և կատարողական մրցույթներին սովորողներին
մասնակցույթյան վերաբերյալ**

Ցուցանիշ	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցներին թիվը և տոկոսը՝ հաստատույթյան սովորողներին ընդհանուր թվի համեմատ (տոկոսի հաշվարկ.մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցներին թվի հարաբերույթյունը հաստատույթյան սովորողներին ընդհանուր թվին՝տոկոսային արտահայտույթյամբ)	8 1%	13 1,5%	18 2,1%
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողներին թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ.մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացածներին թվի հարաբերույթյունը հաստատույթյունից մասնակիցներին ընդհանուր թվին՝տոկոսային արտահայտույթյամբ)	0 0%	0 0%	1 5.6%
Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցներին թիվը և տոկոսը՝ հաստատույթյան սովորողներին ընդհանուր թվի համեմատ (տոկոսի հաշվարկ.հաստատույթյունից հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցներին թվի հարաբերույթյունը հաստատույթյան սովորողներին ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտույթյամբ)	0 0%	4 0.5%	1 0.1%
Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողներին թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ.հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացածներին թվի հարաբերույթյունը հաստատույթյունից մասնակիցներին ընդհանուր թվին՝տոկոսային արտահայտույթյամբ)	0 0%	0 0%	1 100%
Միջազգային առարկայական օլիմպիադաների մասնակիցներին թիվը և տոկոսը՝ հաստատույթյան սովորողներին ընդհանուր թվի համեմատ (տոկոսի հաշվարկ.միջազգային առարկայական օլիմպիադաների մասնակիցներին թվի հարաբերույթյունը հաստատույթյան սովորողներին ընդհանուր թվին՝տոկոսային արտահայտույթյամբ)	0 0%	0 0%	0 0%
Լիցենզավորված հիմնականում միմյուրյաններ	0	0	0

Վերջին երեք տարիների կտրվածքով առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը դպրոցում աճել է՝ շնորհիվ դպրոցում տարված հետևողական աշխատանքի: Հարկ է նկատել, որ նույն աշակերտը երբեմն մասնակցում է տարբեր առարկայական օլիմպիադաների:

2022=2023 ուսումնական տարվա ընթացքում դպրոցի սաները գրանցել են մի շարք հաջողություններ՝ մասնակցելով տարբեր մրցույթների:

- VivaCell-MTS-ի կողմից հայտարարված նորագույն տեխնոլոգիաների մրցույթում դպրոցի սաների ներկայացրած հավելվածը արժանացել է հատուկ մրցանակի:
- Դպրոցի աղջիկների և տղաների թիմերը մասնակցելով մինչև 18 տարեկանների «Մարգալետի գավաթ»-ի մարզային առաջնության տարածաշրջանային փուլին՝ գրավել են 2-րդ տեղը:
- Դպրոցի սաները մասնակցելով շախմատի դպրոցականների 17-րդ օլիմպիադային, 2-րդ փուլում գրավել են 1-ին տեղը:
- Դպրոցի 9-րդ դասարանի սովորողները մասնակցել են ՀՀ ԿԳՄՄՆ -ի ԿԶՆԱԿ հիմնադրամի Կրթական նորարարությունների բաժնի հայտարարած «Ես եմ ռեժիսորը» մրցույթին:
- Դպրոցի սաները կերպարվեստի ուսուցչի նախաձեռնությամբ մասնակցել են ՀՀ ԿԳՄՄՆ և Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կազմակերպած Համահայկական մանկապատանեկան նկարչական ամենամյա մրցույթ-փառատոնին՝ «Ինքնաճանաչում. Էրեբունի» խորագրով:
- Դպրոցի սաները մասնակցել են ՀՀ ԿԳՄՄՆ -ի և Լեզվի կոմիտեի հետ համատեղ, հայտարարած աշակերտների հեղինակային տեսանյութերի մրցույթին՝ «Բարբառը մեր հարստությունն է» խորագրով:
- Դպրոցի սաները մասնակցել են ՀՀ ԿԳՄՄՆ «ԿԶՆԱԿ» հիմնադրամի Կրթական նորարարությունների բաժնի հայտարարած «Հայ երգը դպրոցում» հանրապետական նախագծին:
- Դպրոցի սաները այցելել են Հ. Թումանյանի թանգարան և հանդես եկել «Հ. Թումանյանի և Ա. Իսահակյանի հերոսները» հեղինակային քեմականացմամբ:

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԱՆՎԱՆ

N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ ԱՄԻՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ

«ՄԱՅՐԵՆԻ», «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» /4-րդ դասարաններ/

ԵՎ «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ», «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ».

«ՀԱՆՐԱՀԱՇԻՎ», «ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ» /9-րդ դասարաններ/

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱԹԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ

ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՄԱՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարտ - ապրիլ ամիսների ընթացքում «Մայրենի», «Մաթեմատիկա» /4-րդ դասարաններ/ և «Հայոց լեզու», «Գրականություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» /9-րդ դասարաններ/ ուսումնական առարկաներից ուսուցման որակի ուսումնասիրության նպատակով իրականացվել է դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով: Իրականացված դասալսումների նպատակներ են սահմանվել դասի ընթացքում ուսուցչի կիրառած մեթոդների արդյունավետության ուսումնասիրություն և սովորողների գիտելիքների որակի պարզում:

Իրականացված դասալսումների արդյունքները քննարկվել են, կատարվել են համապատասխան առաջարկություններ, ուսուցիչներին ներկայացվել են դասի ուժեղ և թույլ կողմերը: Կարևորվել է ակտիվ ուսումնառությունը, ուսուցման նոր մեթոդների ու հնարների կիրառումը, սովորողների պատրաստվածությանը համապատասխան մեթոդների ընտրությունը, ուսումնառական գործընթացում բոլոր սովորողների ներգրավումը, դասաժամի արդյունավետ և նպատակային օգտագործումը, առանցքային դատողությունների առանձնացումը, առաջադրանքների հետևողական ստուգումը, միջառարկայական և ներառարկայական կապերի ապահովումը, դասի տարբեր փուլերում կիրառված դիդակտիկ և S2S նյութերի կիրառումը, սովորողների արժեքային համակարգի զարգացումը, ստեղծագործական միտքը, քննադատական մտածողության և ինքնուրույնության զարգացումը, համագործակցությունը, դրական հուզական միջավայրը, սովորողների մոտիվացիան, ուսումնական նյութի նկատմամբ սովորողների հետաքրքրությունը:

Ուսումնասիրության արդյունքում որպես դասալսումների առաջարկություններ նշվել են դասի պլանավորումը «աշակերտակենտրոն» մոտեցմամբ, փոխներգործուն մեթոդների կիրառումը, սովորողների անհատական բնութագրերը /մտածողության տեսակներ/ հաշվի առնելով՝ շերտավորված աշխատանքի կազմակերպումը, գնահատման տարբեր ձևերի կիրառումը, դիդակտիկ նյութերի արդյունավետ կիրառումը, ժամանակի ճիշտ կառավարումը, դասի ամփոփմանն ավելի շատ ժամանակի հատկացումը, սովորողների ուշադրության հրավիրումը մասսայական սխալների, թերացումների վրա, նյութի բառապաշարի վրա, դասի նյութի ծավալի ընտրությունն ըստ դասարանի սովորողների պատրաստվածության աստիճանի, միջառարկայական կապերի ապահովումը:

21-րդ դարի ուսուցումը հիմնված է սովորողի առանձնահատկությունների վրա, ուստի կարևորվել է աշակերտներին ստեղծարար լինելու, սովորելու, ուսուցման պրոցեսը վայելելու, համագործակցությունը գնահատելու, ներդրված ջանքերի կապը ստացված արդյունքի հետ նկատելու հնարավորություն տալը:


Սովորողների պատրաստվածության աստիճանը բացահայտելու նպատակով ապրիլ ամսվա ընթացքում անցկացվել են թեմատիկ ստուգումներ տնօրենության կողմից «Մայրենի» և «Մաթեմատիկա» ուսումնական առարկաներից՝ 4-րդ դասարաններում, «Հայոց լեզու», «Գրականություն», «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» ուսումնական առարկաներից՝ 9-րդ դասարաններում: Հարկ է նշել, որ տնօրենության կողմից թեմատիկ ստուգման տարբերակները կազմվել են համապատասխան առարկայական մեթոդական միավորումների կողմից, ներկայացվել տնօրենի հաստատմանը: Կատարվել է արդյունքների վերլուծություն, որի ընթացքում բացահայտվել են սովորողների գիտելիքների որակը:

Աղյուսակում բերված են տնօրենության կողմից անցկացված թեմատիկ ստուգման արդյունքները «Մայրենի» և «Մաթեմատիկա» /4-րդ դասարաններ/ և «Հայոց լեզու», «Գրականություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» / 9-րդ դասարաններ/ ուսումնական առարկաներից ըստ դասարանների.

Դասարան	Առարկա	Միջին գնահատական	Որակական ցուցանիշ	Առաջադիմություն
IVU	Մայրենի	7	65.5%	100%
IVԲ	Մայրենի	7.73	81.8%	100%
IVԳ	Մայրենի	6.73	56.7%	96.7%
IVU	Մաթեմատիկա	5.04	22.2%	70.4%
IVԲ	Մաթեմատիկա	6.18	45.5%	87.9%
IVԳ	Մաթեմատիկա	5.67	37%	81.5%
IXU	Հայոց լեզու	4.83	16.7%	75%
IXԲ	Հայոց լեզու	4.83	20.8%	70.8%
IXԳ	Հայոց լեզու	4.65	11.5%	76.9%
IXU	Գրականություն	3.81	9.5%	47.6%
IXԲ	Գրականություն	3.43	0%	43.5%
IXԳ	Գրականություն	4.48	7.4%	81.5%
IXU	Հանրահաշիվ	4.68	28%	60%
IXԲ	Հանրահաշիվ	4.69	15.4%	65.4%
IXԳ	Հանրահաշիվ	5.33	33.3%	70.4%
IXU	Երկրաչափություն	3.73	9.1%	50%
IXԲ	Երկրաչափություն	4.04	21.7%	43.5%
IXԳ	Երկրաչափություն	5.07	29.6%	66.7%


IV դասարաններում «Մայրենի» ուսումնական առարկայի թեմատիկ ստուգմանը մասնակցած 92 սովորողներից «անբավարար» է գնահատվել 1-ը (1%), «բավարար»՝ 28-ը (31%), «լավ»՝ 39-ը (42%), «գերազանց»՝ 24-ը (26%): Միջին գնահատականը կազմել է 7.17 միավոր (10 միավորային սանդղակում):

Մայրենի, IV դաս.




IV դասարաններում «Մաթեմատիկա» ուսումնական առարկայի թեմատիկ ստուգմանը մասնակցած 87 սովորողներից «անբավարար» են գնահատվել 17-ը (19%), «բավարար»՝ 39-ը (45%), «լավ»՝ 18-ը (21%), «գերազանց»՝ 13-ը (15%): Միջին գնահատականը կազմել է 5.67 միավոր (10 միավորային սանդղակում):

Մաթեմատիկա, IV դաս.



IX դասարաններում «Հայոց լեզու» առարկայի թեմատիկ ստուգմանը մասնակցած 74 սովորողներից «անբավարար» են գնահատվել 19-ը (26%), «բավարար»՝ 43-ը (58%), «լավ»՝ 9-ը (12%), «գերազանց»՝ 3-ը (4%): Միջին գնահատականը կազմել է 4.77 միավոր (10 միավորային սանդղակում):


Հայոց լեզու, IX դաս.



Հայոց լեզու, IX դաս.	
Գերազանց	3
Լավ	9
Բավարար	43
Անբավարար	19

IX դասարաններում «Գրականություն» առարկայի թեմատիկ ստուգմանը մասնակցած 71 սովորողներից «անբավարար» են գնահատվել 29-ը (41%), «բավարար»՝ 38-ը (53%), «լավ»՝ 4-ը (6%), «գերազանց»՝ ոչ ոք (0%): Միջին գնահատականը կազմել է 3.94 միավոր (10 միավորային սանդղակում):

Գրականություն, IX դաս.



Գրականություն, IX դաս.	
Գերազանց	0
Լավ	4
Բավարար	38


Արդյունքների համեմատման նպատակով բերված են 2022թ.նոյեմբեր ամսվա և 2023թ. ապրիլ ամսվա ընթացքում 9-րդ դասարաններում անցկացված թեմատիկ ստուգումների արդյունքները «Հայոց լեզու» և «Գրականություն» ուսումնական առարկաներից.

Գնահատական	Հայոց լեզու, 2022թ. նոյեմբեր			Հայոց լեզու, 2023թ. ապրիլ			Գրականություն, 2022թ. նոյեմբեր			Գրականություն, 2023թ. ապրիլ		
	IX ^Ա	IX ^Բ	IX ^Գ	IX ^Ա	IX ^Բ	IX ^Գ	IX ^Ա	IX ^Բ	IX ^Գ	IX ^Ա	IX ^Բ	IX ^Գ
Դասարան												
Միջին գնահատական	3.3	4	4	4.83	4.83	4.65	3.05	3.29	3.5	3.81	3.43	4.48
Որակական ցուցանիշ(%)	4.35	11.54	7.69	16.7	20.8	11.5	4.5	4.17	9.1	9.5	0	7.4
Առաջադիմություն(%)	47.83	53.85	50	75	70.8	76.9	27.3	50	31.8	47.6	43.5	81.5

«Հայոց լեզու» ուսումնական առարկայից 2022թ. նոյեմբեր ամսվա ընթացքում 9-րդ դասարաններում անցկացված թեմատիկ ստուգման արդյունքում միջին գնահատականը կազմել է 3.71 միավոր, իսկ 2023թ. ապրիլ ամսվա ընթացքում՝ 4.77 միավոր (10 միավորային սանդղակում): Կատարված աշխատանքի արդյունքում նկատվել է դրական տեղաշարժ:


«Գրականություն» ուսումնական առարկայից 2022թ. նոյեմբեր ամսվա ընթացքում 9-րդ դասարաններում անցկացված թեմատիկ ստուգման արդյունքում միջին գնահատականը կազմել է 3.28 միավոր, իսկ 2023թ. ապրիլ ամսվա ընթացքում՝ 3.94 միավոր (10 միավորային սանդղակում): Կատարված աշխատանքի արդյունքում նկատվել է դրական տեղաշարժ: Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ սովորողների մեծ մասը շատ քիչ են ընթերցում կամ բնավ չեն ընթերցում բնագրերը: Հարկավոր է աշխատանք տանել սովորողների շրջանում ընթերցանությունը կարևորելու:

2023թ. ապրիլ ամսվա ընթացքում IX դասարաններում «Հանրահաշիվ» առարկայի թեմատիկ ստուգմանը մասնակցած 78 սովորողներից «անբավարար» են գնահատվել 27-ը (34%), «բավարար»՝ 31-ը (40%), «լավ»՝ 10-ը (13%), «գերազանց»՝ 10-ը (13%): Միջին գնահատականը կազմել է 4.91 միավոր (10 միավորային սանդղակում):



2023թ. ապրիլ ամսվա ընթացքում IX դասարաններում «Երկրաչափություն» առարկայի թեմատիկ ստուգմանը մասնակցած 72 սովորողներից «անբավարար» են գնահատվել 33-ը (46%), «բավարար»՝ 24-ը (33%), «լավ»՝ 11-ը (15%), «գերազանց»՝ 4-ը (6%): Միջին գնահատականը կազմել է 4.33 միավոր (10 միավորային սանդղակում):

Երկրաչափություն, IX դաս.



Երկրաչափություն, IX դաս.	
Գերազանց	4
Լավ	11
Բավարար	24
Անբավարար	33

Թեմատիկ ստուգման արդյունքներն առավել մանրամասն ներկայացված են ստորև.					
Դասարան, ուսուցիչ	Առարկա	Անցկաց ման օրը	Միջին գնահատական	Որակական ցուցանիշ	Առաջադիմություն
IV ^Ա	Մայրենի	21.04.23թ. .	7	65.5%	100%
IV ^Բ		20.04.23թ. .	7.73	81.8%	100%
IV ^Գ		21.04.23թ. .	6.73	56.7%	96.7%
IV ^Ա	Մաթեմատիկա	12.04.23թ. .	5.04	22.2%	70.4%
IV ^Բ			6.18	45.5%	87.9%
IV ^Գ			5.67	37%	81.5%
IX ^Ա	Հայոց լեզու	17.04.23թ. .	4.83	16.7%	75%
IX ^Բ		14.04.23թ.	4.83	20.8%	70.8%
IX ^Գ		13.04.23թ. .	4.65	11.5%	76.9%
IX ^Ա	Գրականություն	14.04.23թ. .	3.81	9.5%	47.6%
IX ^Բ		14.04.23թ. .	3.43	0%	43.5%
IX ^Գ		18.04.23թ. .	4.48	7.4%	81.5%
IX ^Ա		19.04.23թ. .	4.68	28%	60%
IX ^Բ				15.4%	65.4%

Ստորև ներկայացված են 2023թ. ապրիլ ամսվա ընթացքում 4-րդ դասարաններում անցկացված թեմատիկ ստուգման արդյունքները «Մայրենի» և «Մաթեմատիկա» ուսումնական առարկաներից.

Դասարան	IVԱ		IVԲ		IVԳ	
Առարկա/ ուսուցիչ/ Գնահատական	Մայրենի /Ա. Մտեփանյան/ Մաթեմատիկա /Ա. Մտեփանյան/		Մայրենի /Ա. Երկցյան/ Մաթեմատիկա /Ա. Մուրադյան/		Մայրենի /Ա. Արսենյան/ Մաթեմատիկա /Ա. Արսենյան/	
<<10>>միավոր		1	1	1		
<<9>> միավոր	7	2	13	5	3	4
<<8>> միավոր	6	1	4	4	9	4
<<7>> միավոր	6	2	9	5	5	2
<<6>> միավոր	3	4	4	7	8	3
<<5>> միավոր	4	4	1	2	1	6
<<4>> միավոր	3	5	1	5	3	3
<<3>> միավոր		6		2	1	2
<<2>> միավոր		2		2		2
<<1>> միավոր						1
Աշխատանքին մասնակցած սովորողների քանակ	29	27	33	33	30	27
Միջին գնահատական	7	5.04	7.73	6.18	6.73	5.67
Որակական ցուցանիշ(%)	65.5	22.2	81.8	45.5	56.7	37
Առաջադիմություն(%)	100	70.4	100	87.9	96.7	81.5

Աղյուսակում բերված են 2023թ. ապրիլ ամսվա ընթացքում 9-րդ դասարաններում անցկացված թեմատիկ ստուգման արդյունքները «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» ուսումնական առարկաներից.

Գնահատական	Հանրահաշիվ			Երկրաչափություն		
Դասարան	IX ^Ա	IX ^Բ	IX ^Գ	IX ^Ա	IX ^Բ	IX ^Գ
<<10>> միավոր						
<<9>> միավոր	2	2	6	1		3
<<8>> միավոր	1	2	1		1	2
<<7>> միավոր	4		2	1	4	3
<<6>> միավոր	2	4	2	1	2	1
<<5>> միավոր	1	6	4	4		5
<<4>> միավոր	5	3	4	4	3	4
<<3>> միավոր	7	4	5	4	7	8
<<2>> միավոր	2	5	2	5	6	1
<<1>> միավոր	1		1	2		
Աշխատանքին մասնակցած սովորողների քանակ	25	26	27	22	23	27
Միջին գնահատական	4.68	4.69	5.33	3.73	4.04	5.07
Որակական ցուցանիշ(%)	28	15.4	33.3	9.1	21.7	29.6
Առաջադիմություն(%)	60	65.4	70.4	50	43.5	66.7

1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

ՈՒԹԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1.Ուսումնադաստիրակչական աշխատանքների պլան՝ ներդպրոցական վերահսկողություն	1.Առաջադիմությունը և որակական ցուցանիշը ցածր են հիմնական դպրոցում
2.Թեմատիկ պլանների համապատասխանության ստուգում ծրագրերին և ՀԴԶ-ին	2.Առաջադիմությունը և որակական ցուցանիշը սովորաբար ցածր են առաջին կիսամյակում,բարձր՝ երկրորդ կիսամյակում
3. Մշտադիտարկում պարտադիր վերապատրաստում անցած ուսուցիչների մոտ/տես 121-127 էջ/	3.Բնագիտական առարկաների գործնական աշխատանքները բավարար չափով չեն իրականանում
4. Առաջավոր փորձի ուսումնասիրություն և տարածում	4.Նախագծային աշխատանքներ նախագծելու ոչ բավարար փորձառությունը
5. Մնացորդային գիտելիքների ստուգում և վերլուծություն/տես էջ 100-105/	5.Դասարաններում աշակերտների բարձր խտությունը
6.Դասալսույթներ տարբեր նպատակներով,օրինակ՝ ներառականության	6.Կարողունակահեն կրթության բովանդակության ոչ լրիվ տիրապետում
7.Ուսուցչի գործունեության ուսումնասիրություն	7.Մանկավարժական համակազմի համալրելու ոչ արդյունավետ կարգերը
8. Տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ և վերլուծություններ/տես էջ 108-117/	8.Երկարօրյա ուսուցման կրթության ներդրման հետ կապված դժվարությունները՝ ծնողական ներդրումները/համայնքի անվճարունակությունը/, ցածր առաջադիմություն ունեցող սովորողների տարանջատումը կարող է բերել բուլինգի դեպքերի
9. 2-րդ,5-րդ,7-րդ դասարաններում ԿՁՆԱԿ հիմնադրամի դիտարկման թերթիկների միջոցով կարիքի գնահատում	9.Ծնողների ներգրավվածության պակասը
10. 2-րդ,5-րդ,7-րդ դասարաններում ուսուցիչների հետ պարբերաբար հանդիպումների կազմակերպում	10.Աշակերտների անհարգելի բացակայությունները
11. 2-րդ,5-րդ,7-րդ դասարաններում գնահատման ձևերի ուսումնասիրում	
12.Փորձական քննությունների անցկացում 4-րդ և 9-րդ դասարաններում	
13.Ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ աշխատանք՝ ուսուցչի և ուսուցչի օգնականի ,իսկ փետրվարից՝ երկարօրյա ուսուցման միջոցով	
14. ՌԴ-ից և այլ երկրներից դպրոց տեղափոխված սովորողների ,,Անհատական ուսուցման կազմակերպում”	
15. ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսումնառության կազմակերպում,, ԱՌԴՊ”-ով	
16. ՔԱՆ ակադեմիայի,ԿՏԱԿ-ի և այլ հարթակներում տեղադրված ուսումնական նյութերի օգտագործում	
17. Օլիմպիադայի նախապատրաստական աշխատանքներ	
18. Կրթական նորարական մեթոդների ուսումնասիրություն	
19. Չեկույցներ՝ հանրակրթության ոլորտի տարաբնույթ թեմաներով	
20. 1-ին դասարաններում տառաճանաչության ստուգում	
21. Ընթերցանության ստուգում տարրական դասարաններում	
22. Սկսնակ ուսուցիչներին մեթոդական օգնության ցուցաբերում	
23. Կազմակերպվում ենք մրցույթներ,վիկտորինաներ,համատեղ դասեր՝ ուսուցիչ- ուսուցիչ,ուսուցիչ- հոգեբան,ուսուցիչ- ծնող,ուսուցիչ-ուսուցչի օգնական	
24. Նախագծային աշխատանքների իրականացում/ <<Բնական կոսմետիկա.օգուտ և բուժիչ ազդեցություն>>, <<Դպրոցի հարակից տարածքի հատակագծի կազմում>>,<<Սոդա.օգուտ և վնաս>>	
25.Խմբակների առկայությունը՝ կերպարվեստ,արաբագիտություն,վոլեյբոլ	

7. ՈԼՈՐՏԸ՝ **Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակ**

ՆՊԱՏԱԿԸ՝ Կրթության որակի բարելավում
Կրթության որակի քաղաքականություն

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- 1. ՀԴԶ-ին համապատասխան տարրական և հիմնական դասարաններին ներկայացվող վերջնարդյունքների ապահովում
- 2. Իրականացնել կրթության որակի ապահովման քաղաքականություն
- 3. Սովորողների հավասար կրթության իրականացում

ՌԻՍԿԵՐԸ՝

- 1. Ուսուցիչների չափորոշչի կիրառման անփորձությունը,նոր գնահատման ձևերը
- 2. Ներառական կրթության մարտահրավերները՝ խելամիտ հարմարեցումները

ՌԻՍԿԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆՆ ԼՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՐԴՂԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- 1. Նոր չափորոշիչ ներդրված դասարաններում ուսումնասիրություններ կատարել և տալ մեթոդական օգնություն
- 2. Ներառական կրթությունը իրականացնել ՏՄԱԿ-ի,ՀՄԿ-ի հետ համագործակցելով՝ հարմարեցումների համատեքստում հատկապես
- 3. Գնահատման ձևերին վերաբերող գործնական սեմինարներ

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
1.Մեթոդական միավորումներում քննարկել 2-րդ,5-րդ և 7-րդ դասարաններում առարկայական չափորոշչը	տնօրեն,տնօրենի տեղակալ,Մ/մ նախագահներ	2023-2024	առարկայական չափորոշիչ		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ
2. Մեթոդական միավորումներում քննարկել 3-րդ,6-րդ և 8-րդ դասարաններում առարկայական չափորոշիչը	տնօրեն,տնօրենի տեղակալ,Մ/մ նախագահներ	2024 -2025	առարկայական չափորոշիչ		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ
3.Համընդհանուր ներառական կրթության համատեքստում՝ խելամիտ հարմարեցումների ապահովում	տնօրեն,վարչատնտեսական համակարգող,տնտեսվար	2023-2028	պահպանման ծախսեր	պետական բյուջե	Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ
4.Բարձր որակավորում և պատրաստվածություն/ՏՀՏ և այլն/ ունեցող մանկավարժական համակազմի ապահովում	տնօրեն,տնօրենի տեղակալ,ինֆորմատիկայի ուսուցիչ,Էլ. կառավ. և դաս.ապահ.մասնագետ	2023-2028	մարդկային ռեսուրսներ		Լիազոր մարմին,կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ

5. Ճարուևակել կատարել մշտադիտարկում պարտադիր վերապատրաստում անցած ուսուցիչների	տնօրեն, տնօրենի տեղակալ	2023-2028	ՆԴՎ/դասալսումներ, ուսումնասիրություններ, գրավորներ և այլն		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
6. Ներառական համագործակցային միջավայրի ստեղծում	տնօրեն, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ, ուսուցչի օգնականներ, հոգեբան	2023-2028	հարմարեցված միջավայր, խելամիտ հարմարեցումներ, զարգացնող խաղեր	Պետական բյուջե	Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ
7. Կրթական պաշարների ստեղծում, գոյություն ունեցող պաշարների բարելավում	տնօրեն, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ, ուսուցիչներ	2023 -2028			Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
8. Չափորոշչին համապատասխան մեթոդների սահմանում, կիրառում, փորձի փոխանակում	տնօրեն, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ, մանկավարժական համակազմ	2023-2028			Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
9. Ուսումնառության գնահատման արդյունքների վերլուծություն, հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների համապատասխանություն	տնօրեն, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ, մանկավարժական համակազմ	2023-2028			Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
10. Կրթության որակի ապահովում ծնողների կողմից առաջ քաշվող պահանջներից	տնօրեն, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028	հարցաթերթեր		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
11. Թափանցիկ և հաշվետվողական համակարգերի, մեխանիզմների կիրառություն կրթության չափանշանների համար	տնօրեն, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ, ուսուցիչներ, ծնողներ	2023-2028	հաշվետվություններ թղթային և էլեկտրոնային		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ
12. Գնահատման ձևերի գործնականում ներդրման հետևողական աշխատանքներ	տնօրեն, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ, մանկավարժական համակազմ		գնահատման գործիքակազմ		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ

1.8.Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Դպրոցի խնդիրն է դաստիարակել հումանիտար մարդիկ և գիտակից քաղաքացիներ:
Սերը հանուն մարդկության և իր ժողովրդի հանդեպ պետք է զարգանա մարդկանց մոտ սերտ իրականության մեջ: Ժամանակակից աշխարհի դպրոցում շատ կարևոր է բազմակարծիք ,ներառական և մասնակցային արժեքային միջավայրը:
2018-ից 2023 թվականներին որպես տնօրեն որդեգրել եմ ժողովրդավարական կառավարման ոճը: Ժողովրդավարական կառավարման ոճը իրենից ենթադրում է բավականին դժվարություններ, սակայն այն հաղթահարելու տարաբնույթ ուղիներ ենք մշակել.մանկավարժական խորհրդի միջոցով ներքին կարգապահական նոր կանոններ,սահմանվել են աշխատողների աշխատանքային կանոններ,աշակերտական խորհրդի հետ միասին սովորողների կանոնակարգը,որոնք յուրաքանչյուր դասարանում ներկայացրել ենք և փակցրել,մշակված թե աշխատողների և թե սովորողների կանոնակարգը դպրոցի պաշտոնական կայքում տեղադրված են:Ուսումնական հաստատությունում պաշտպանվում են սովորողների և աշխատողների իրավունքները,առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները կրթական,սոցիալական և առողջապահական շահերի իրականացման համար:

Բազմակարծիք,ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Հաստատությունը գործունեությունը մասնակցային է՝ սկսած կառավարման մարմինների հետ փոխհարաբերություններից մինչև հաստատության մանկավարժական,սպասարկող անձնակազմ	1.Նոր մեթոդների վերաբերյալ դժգոհություն ,տրտունջ
2. Հաստատության վարչական աշխատողները որոշումները կայացնում են քննարկելով տարբեր հարթակներում,սում են կարծիքներ,առաջարկություններ,հաստատությունում փոխադարձ համաձայնության մթնոլորտ է տիրում	2.Որոշումներ կայացնելու ժամանակ քննարկումները երբեմն որոշ ուսուցիչների կողմից դիտարկվում է վարչական աշխատողների „թույլ“ լինել
3.Ներքին կազմակերպական կանոնակարգումների իրականացման և դրանց վերաբերյալ անկախ որոշու մների կայացման կարողություն	3.Հաճախ որոշ ուսուցիչներ ակադեմիական ազատությունը որակում են որպես անկառավարելիություն
4.Դպրոցը մշակում է ռազմավարություն՝ առողջ միջավայր ստեղծելու համար.հետևում ենք նորարարություններին	4.Ուռճացված գնահատականների և վերաբերմունքի որոշակի առկայություն
5.Ուսուցիչները ունեն ակադեմիական ազատություն .կարող են ծավալել հետազոտական գործունեություն .ազատ արտահայտել կարծիք տվյալ հաստատության կամ համակարգի վերաբերյալ .ազատ մասնակցություն ունենալ մասնագիտական կամ ներկայացուցչական ակադեմիական մարմիններում	5.Դպրոցում դեռ կան աշակերտներ,ովքեր վախենում են ազատ արտահայտել իրենց տեսակետը,առողջ քննադատական խոսքով հանդես գալ
6.Աշխատակիցները ունեն Էթիկայի մասնագիտական սկզբունքներին համապատասխանող չափանիշներ	6.Բուլինգի կանխարգելիչ միջոցառումների թույլ գործիքներ
7.Պահպանում են կանոնակարգը	
8.Դպրոցում տիրում է հետազոտական միջավայր	
9.Իրականացնում ենք միջմշակութային հաղորդակցության դասեր,խղճի ազատության մասին դասեր	
10.Կա հանրային հաղորդակցություն	
11.Տիրում է ակադեմիական ազնվություն/փոխադարձ վստահություն,հարգանք, պատասխանատվություն,արդարություն/	

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
12.Ուսուցիչները օգնում են սովորողներին ճանաչել այլ մշակույթներ	
13.Անցակացնում են դասեր, միջոցառումներ աստվածաբանության, տոնակատարությունների, ավանդույթների և աշխարհի մարդկանց հավատքի համակարգերի մասին	7.Ունենք ծնողներ ևս, ովքեր համընդհանուր ներառումը դիտարկում են վատ տեսանկյունից և չեն ցուցաբերում օգնություն ԿԱՊԿՈՒ երեխաներին օժանդակություն ցուցաբերելու աշխատանքներում, դա հիմնականում տեղի է ունենում նոր ուսումնական տարում, հետագայում ծնողների հետ համատեղ աշխատանքը տալիս է արդյունք
14.eTwinning հարթակում միանում են տարբեր ազգերի մշակույթներին վերաբերող նախագծերի	
15.Սովորողների մեջ սերմանվում է հարգալից խոսքի մշակույթ՝ հստակ ուրվագծելով համապատասխան վարքի և լեզվի ակնկալակիքները	.
16.Դպրոցը իրականացնում է համընդհանուր ներառական կրթություն	
17.Միջոցառումներ է իրականացնում արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների հայտնաբերման ուղղությամբ	
18.Ներառականության թեմաներով կազմակերպվում են տարաբնույթ սեմինարներ ուսուցիչների, ծնողների և աշակերտների մասնակցությամբ	
19.Դպրոցում գործում է հոգեբանի անկյուն	
20.Իրականացվում են տեղեկատվական արշավներ՝ թրաֆիքիգի, ՁԻԱՀ/ՄԻԱԿ-ի վերաբերյալ, հետազոտական աշխատանքներ	
21.Արդեն ավանդույթ է դարձել աշակերտների նախաձեռնությամբ իրականացվող „Պարի միջազգային օրվան նվիրված” միջոցառումները, մենահամերգները	
22.„Իմ կյանքը համայնքում” ծրագրի ընթացում դպրոցի, „նոր” աշակերտների ընդունելու, ինտեգրելու աշխատանքներում մասնակցել է ամբողջ դպրոցը	
23.„Հայ երգը դպրոցում” իրականացված նախագծի ընթացում համագործակցել են տարբեր դասարանների աշակերտներ, ուսուցիչներ, տարբեր հաստատությունների մանկավարժներ, աշակերտներ:	
24.Դպրոցի հոգեբանը իրականացրել է „Բուլինգի կանխարգելման կիրառական մոտեցումներ” թեմայով երկարաժամկետ ծրագիր	
25.Մեդրագրագիտությանը նվիրված տեսանյութ է ստեղծվել աշակերտների կողմից, որը արժանացել է հատուկ մրցանակի	
26.Դպրոցի ուսուցիչների և աշակերտների համագործակցության արդյունքում մշակվել է „Tuk-tuk” հավելվածը, որը արժանացել է հատուկ մրցանակի	
27. Ուսուցիչների, ծնողների, աշակերտների միջև սահմաններ գոյություն չունեն	
28.Խրախուսվում է քննադատական մտածողությունը թե սովորողների, թե ծնողների և թե ուսուցիչների շրջանում	
29.Համագործակցում ենք „Հայկական Կարմիր Խաչի” հետ	

8. ՈԼՈՐՏԸ՝ **Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր**

ՆՊԱՏԱԿԸ՝ Համընդհանուր ներառական քաղաքականության ապահովում
Բազմակարծիք, մասնակցային միջավայրի ապահովում

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- 1. Իրականացնել արտակարգ ընդունակություններ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների դիտարկում
- 2. Ապահովել միջավայր՝ համապատասխան խելամիտ հարմարեցումներով, դիդակտիկ և մարդկային ռեսուրսներով
- 3. Կարևորել բազմակարծիք և մասնակցային միջավայրը հաստատության և օղակների միջև

ՌԻՍԿԵՐԸ՝

- 1. Ծնողների անհամաձայնությունը
- 2. Ֆինանսական միջոցների կարիքը
- 3. Ավտորիտար ուսուցիչների և ընտանիքների առկայությունը

ՌԻՍԿԵՐԻ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- 1. Ծնողների հետ կատարել բազմակողմանի քննարկումներ, զրույցներ, օրինակների միջոցով մոտիվացնել
- 2. Խելամիտ ֆինանսական միջոցների տնօրինում
- 3. Ծնող-ուսուցիչ-տնօրեն-աշակերտ հանդիպումներ և քննարկումներ

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
1. Յուրաքանչյուր Նոր ուսումնական տարում իրականացնել դիտարկումներ	տնօրեն, տնօրենի տեղակալ, հոգեբան	2023-2028 սեպտեմբեր	դիտարկման թերթիկ		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
2. Դիմել Կոտայքի մարզի ՏՄԱԿ վկայագրելու հայտնաբերված սովորողներին	տնօրեն, տնօրենի տեղակալ, հոգեբան	2023-2028 հոկտեմբեր	սովորողների և ծնողների բոլոր պահանջվող փաստաթղթերը, հիմքերը		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
3. Արտակարգ ընդունակություններ ունեցող և ՌԴ-ից տեղափոխված երեխաների „Անհատական ուսուցման պլանի“ կազմում	տնօրեն, տնօրենի տեղակալ, դասղեկներ, ուսուցչի օգնականներ	2023-2028 հոկտեմբեր	„Անհատական ուսուցման պլան“		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
4. Շարունակել համալրել ուսումնական միջավայրը	տնօրեն,համակարգող,հաշվապահ,գնումների մասնագետ	2023-2028	խելամիտ հարմարեցումներ,զարգացնող դիդակտիկ ռեսուրսներ	պետական բյուջե`խելամիտ հարմարեցումների համար հատկացված	Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ
5. Դիտարկել և գնահատել մասնակցությունը որոշումների կայացմանը/ծնողներ,մանկա վարժներ,սովորողներ/	տնօրեն,կրթական աջակցությունների գծով համակարգող,ծնողական կոմիտեի նախագահ,աշակերտական խորհրդի նախագահ	2024-2028 հունիս-օգոստոս	դիտարկման և գնահատման թերթիկ, անանուն հարցումներ		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, աշակերտական խորհուրդ
6. Շարունակել իրականացնել բուլինգի կանխարգելմանը վերաբերող միջոցառումներ .ֆիզիկական բռնության .հոգեբանական բռնության .հարկադիր օտարման	տնօրեն,հոգեբան,ԴԱԿ, ուսուցչի օգնականներ	2023-2028	բուլինգի կանխարգելման գործիքակազմ		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ


1.9.Աշխատակազմի արժևորման,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

Ինքնակրթությունը ինքնուրույն կանոնավոր գիտելիքների ձեռք բերումն է,այն նպաստում է ներքին կազմակերպվածության,աշխատասիրության և բարոյական այլ հատկությունների մշակմանը:Դպրոցի աշխատակազմի մի մասը ինքնուրույն կատարելագործում է իր գիտելիքները.ուսումնասիրում է գիտական,գիտահանրամատչելի,ուսումնական,գեղարվեստական գրականություն,մասնակցություն են ունենում դասախոսությունների,զեկուցումների:

Մանկավարժական կազմից պարտադիր վերապատրաստման և տարբեր վերապատրաստումների են մասնակցել 2018-ից մինչև 2023 թվականը` 46 ուսուցիչներից 41-ը,որոնցից

- ըստ մասնագիտական չափանիշների զբաղեցրած պաշտոնի (82%)
- 40 ուսուցիչներ (86.9%) բարձրացրել են իրենց որակավորումը հեռավար ուսուցման հարցերում
- ՏՀՏ հմտությունները բարելավվել են 38 ուսուցիչների կողմից (82.6%) տարբեր դասընթացներում
- 3(6.5 %) ուսուցիչներ մենթորներ են,իրականացնում են վերապատրաստման դասընթացեր տարբեր կազմակերպություններում

Վերապատրաստումներ 2018-2023 թթ



Ուսուցիչների պարտադիր վերապատրաստումից հետո յուրաքանչյուր նոր ուսումնական տարվա ընթացքում իրականացրել և իրականացնում ենք **մշտադիտարկում**, որի նպատակն է կատարել վերլուծություն ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման, ինքնակրթության և վերապատրաստումների արդյունավետության մասին: Ստորև ներկայացնում են 2023 թվականին կատարված մշտադիտարկման մանրամասն վերլուծությունը:

2023թ.-ի մարտ ամսվա ընթացքում կատարվել է ուսուցչի աշխատանքային գործունեության մշտադիտարկում /դիտարկվող ժամանակահատված՝ 2022թ. սեպտեմբերից մինչև 2023թ. մարտը ներառյալ/: Այդ համատեքստում կարևորել ենք պարզել, թե ուսուցիչը վերապատրաստման ընթացքում ձեռք բերած գիտելիքները և հմտությունները ինչպես է կիրառում իր ամենօրյա գործունեության ընթացքում, ինչպես է փոխվել սովորողների սովորելու գործընթացը, ինչպես են վերապատրաստումներն ազդել դպրոցում ուսումնական աշխատանքի կազմակերպման վրա: Որպես ուսումնասիրության նյութ դիտարկվել են նշված ամիսների ընթացքում ուսուցչի մոտ իրականացված դասալսումները, դրանց արձանագրությունները, ուսուցչի կողմից համակարգչային դասարանում կազմակերպված ՏՀՏ կիրառմամբ դասերը, ուսուցչի կողմից մշակված դասերի պլանները, մ/մ նիստերին ներկայացրած զեկույցները, տնօրենության կողմից անցկացված թեմատիկ ստուգման արդյունքները/առկայության դեպքում/ և այլն: Կարևորվել են ուսուցչի կողմից ընտրված փոխներգործուն մեթոդները, ՏՀՏ կիրառությունը, սովորողների համընդհանուր ներառումը և գնահատումը:

Արդյունքում դիտարկվող հարցերի շուրջ, տրվել է հետադարձ կապ ուսուցիչներին, առաջարկվել է իրենց ստացած գիտելիքների կիրառման առավել արդյունավետ ուղիներ: Մատնանշվել է, որ դասի պլան կազմելիս պետք է հասնել դասի նպատակի, ուսումնական նյութի բովանդակության, կրթական մեթոդների և աշակերտների ճանաչողական գործունեության կազմակերպման ձևերի համապատասխանությանը: Ինչքան բարձր է այդ համապատասխանությունը յուրաքանչյուր դասին, այնքան ազդեցիկ է դասի վերջնական արդյունքը:

N	Ազգանուն, անուն	Առարկա	Նկարագրություն	Բաց դասերի քանակ	Զեկույց
			Նշված ժամանակահատվածում տնօրենի ուս. աշխ. գծով տեղակալի կողմից իրականացված դասալսումների քանակ, համակարգչային դասարանում ՏՀՏ գործիքների կիրառմամբ դասերի քանակ, մ/մ նախագահի կողմից իրականացված դասալսումների քանակ		
1	Ուսուցիչ 1	մոլորակ	1+ 4 ՏՀՏ Ուսուցիչը երբեմն կիրառում է ՏՀՏ գործիքներ՝ դասն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով: Ունի learningapps-ով իր կողմից պատրաստված էլ. նյութեր /համապատասխանություն, փազլ, ընտրություն,... /: Ուսուցիչը կարողանում է տեքստային խմբագրիչում հավաքել և ձևավորել տեքստեր, ստեղծել շնորհանդեսներ, ձևավորել դրանք, տեղադրել նկարներ և տեքստեր: Կարողանում է գրել հաղորդագրություն, կցել ֆայլեր, պատասխանել նամակներին: Կիրառում է ինքնաշեն դիդակտիկ նյութեր: Դասը պլանավորում է կիրառելով տարբեր մեթոդներ և հնարներ, իրականացնում է շերտավորված ուսուցում, համընդհանուր ներառում, կարևորում է սովորողների խրախուսումը: Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ: Կարևորում է համագործակցությունը, փոխօգնությունը, դրական հուզական միջավայրը:	1	1 տեսասահիկի կիրառում

2	Ուսուցիչ 2	ընթացակար	1+ 5ՏՀՏ Ուսուցիչը կարողանում է ծրագրել իր աշխատանքը /այդ թվում՝ դասերի պլանների մշակում/։ Ուսուցիչը կարողանում է ՏՀՏ կիրառմամբ դասի բացատրությունը դարձնել ավելի մատչելի։ Ունի learningapps-ով իր կողմից պատրաստված էլ. նյութեր /խաչառ, համապատասխանություն/, PowerPoint-ով պատրաստած տեսասահիկ։ Ուսուցիչը կարողանում է տեքստային խմբագրիչում հավաքել և ձևավորել տեքստեր, ստեղծել շնորհանդեսներ, ձևավորել դրանք։ Կարողանում է գրել հաղորդագրություն, կցել ֆայլեր, պատասխանել նամակներին։ Օգտագործում է ինքնաշեն դիզայնիկ նյութեր։ Դասը պլանավորում է կիրառելով տարբեր մեթոդներ և հնարներ, իրականացնում է շերտավորված ուսուցում, համընդհանուր ներառում, կարևորում է սովորողների ջանքերի ու ձեռքբերումների խրախուսումը, հետադարձ կապը, խրախուսում է հարց տալու մշակույթը։ Ստեղծում է ներառարկայական և միջառարկայական կապեր։ Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ։	1	1 /համատեղ/ տեսասահիկի կիրառում
3	Ուսուցիչ 3	սովորող	2, որից 1տնօրեն. կողմ. գր.+ 10ՏՀՏ + 3մ/մ նախագահի կողմից իրականացված դասալսումներ Ուսուցիչն ունի Gmail հաշիվ, կարողանում է գրել հաղորդագրություն, կցել ֆայլեր, պատասխանել նամակներին։ Կիրառում է ՏՀՏ գործիքներ՝ դասը ավելի գրավիչ դարձնելու նպատակով։ Օգտագործում է Google Docs-ը, ունի learningapps-ով իր կողմից պատրաստված էլ. նյութեր /համապատասխանություն / ։ Դասը պլանավորում է կիրառելով տարբեր մեթոդներ և հնարներ, իրականացնում է շերտավորված ուսուցում, համընդհանուր ներառում, կարևորում է սովորողների խրախուսումը։ Համագործակցում է բազմամասնագիտական թիմի հետ։ ԿԱՊԿՈՒ սովորողի ուսումնառությունն իրականացնում է համաձայն ԱՌԴ-ի։ Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ։ IIIԲ դասարանում «Մաթեմատիկա» ուս. առարկայից 14.12.22թ.-ին տնօրենության կողմից անցկացված թեմատիկ ստուգման արդյունքում սովորողների որակական ցուցանիշը կազմել է 48%, ստուգանքի արդյունքում՝ 92%։	1	1 /համատեղ/ տեսասահիկի կիրառում


	4	Ուսուցիչ 4	դասվար	2+ 11ՏՀՏ+3մ/մ նախագահի կողմից իրականացված դասալսումներ Ուսուցիչն ունի Gmail հաշիվ, կարողանում է գրել հաղորդագրություն, կցել ֆայլեր, պատասխանել նամակներին, Google Drive տիրույթում ստեղծել, տարածել ու պահպանել տեքստային ռեսուրսներ, կիրառել ՏՀՏ գործիքներ՝ դասը ավելի գրավիչ դարձնելու նպատակով: Ունի իր կողմից պատրաստված էլ. նյութեր: Դասը պլանավորում է կիրառելով տարբեր մեթոդներ և հնարներ, իրականացնում է շերտավորված ուսուցում, համընդհանուր ներառում, կարևորում է սովորողների խրախուսումը, արժեքային համակարգի ձևավորումը, հայրենասիրությունը: Ստեղծում է խթանող կրթական միջավայր: Համագործակցում է բազմամասնագիտական թիմի հետ: ԿԱՊԿՈՒ սովորողի ուսումնառությունն իրականացնում է համաձայն ԱՌԻՊ-ի: Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ: Տիրապետում է բուլինգի կանխարգելման հոգեբանական հնարների: Ճանաչում է հաճախ հանդիպող կրթական կարիքները:	1 /ծնողի հետ համատեղ/	1 տեսասահիկի կիրառում
	5	Ուսուցիչ 5	սովոր	2 + 4ՏՀՏ+1մ/մ նախագահի կողմից իրականացված դասալսումներ Ուսուցիչը կարողանում է Google Drive տիրույթում ստեղծել, տարածել ու պահպանել տեքստային ռեսուրսներ, ունի իր կողմից պատրաստված տեսասահիկներ: Դասը պլանավորում է կիրառելով տարբեր մեթոդներ և հնարներ, դասի ավարտին կիրառում է ելքի քարտեր: Կարևորում է սովորողների խրախուսումը: Համագործակցում է բազմամասնագիտական թիմի հետ: ԿԱՊԿՈՒ սովորողի ուսումնառությունն իրականացնում է համաձայն ԱՌԻՊ-ի: Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ:	1	1 տեսասահիկի կիրառում
	6	Ուսուցիչ 6	ֆիզկուլտուրա	2+5մ/մ նախագահի կողմից իրականացված դասալսումներ Ուսուցիչն իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ: Դասերը հիմնականում կազմակերպում է գործնական մեթոդով՝ խոսքային և զննական մեթոդների համակցմամբ:	1	1

7	Ուսուցիչ 7	ռուսաց լեզու	12+2տն. կողմից գրավ+ 7ՏՀՏ+10մ/մ նախագահի կողմից իրականացված դասալսումներ Ուսուցիչը դասը պլանավորում է կիրառելով ժամանակակից տարբեր արդյունավետ մեթոդներ և հնարներ, օգտագործում է զանազան ուսումնական նյութեր, իրականացնում է շերտավորված ուսուցում, խրախուսում է հարց տալու մշակույթը: Կիրառում է տեսասահիկ: Ստեղծում է խթանող կրթական միջավայր, ծավալած քննարկումների ընթացքում կարևորում է սովորողների արժեքային համակարգի ձևավորումն ու զարգացումը: Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ: Կիրառում է գնահատման տարբեր ձևեր: VIIԳ դասարանում «Ռուսաց լեզու» ուս. առարկայից 28.02.23թ.-ին տնօրենության կողմից անցկացված թեմատիկ ստուգման արդյունքում սովորողների որակական ցուցանիշը կազմել է 64.5%, առաջադիմությունը՝ 90.3%, իսկ IX Գ դասարանում՝ համապատասխանաբար 28% և 80%:	1	1 տեսասահիկի կիրառում
8	Ուսուցիչ 8	ռուսաց լեզու	2 +1տն. կողմից գրավ. + 24ՏՀՏ Ուսուցիչը դասը պլանավորում է կիրառելով տարբեր արդյունավետ մեթոդներ և հնարներ, համագործակցում է գործընկերների հետ՝ իրականացնելով համատեղ դասավանդում, կարևորում է միջառարկայական կապերի բացահայտումը: Իրականացնում է շերտավորված ուսուցում, կիրառում է տեսասահիկ: Ստեղծում է խթանող կրթական միջավայր: Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ: Կիրառում է գնահատման տարբեր ձևեր: Օգտվում է ԿԳՄՄՆ կայքից, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի բլոգից, կարողանում է գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը: VIIԱ դասարանում «Ռուսաց լեզու» ուս. առարկայից 27.02.23թ.-ին տնօրենության կողմից անցկացված թեմատիկ ստուգման արդյունքում սովորողների որակական ցուցանիշը կազմել է 50%, առաջադիմությունը՝ 87.5%:	1 /համատեղ դասավան- դում/	1 տեսասահիկի կիրառում

9	Ուսուցիչ 9	դաժնամիտություն	2 + 3տն. կողմից գրավ,+ 47 S2S+3 մ/մ նախագահի կողմից իրականացված դասալսումներ Ուսուցիչն ունի Gmail հաշիվ, կարողանում է պատրաստել առցանց ռեսուրսներ Google Drive ամպային տիրույթում, դրանք հրապարակել հղման միջոցով: Միավորային և ուսուցանող գնահատման գործիքների միջոցով ստեղծում է առցանց ռեսուրսներ: Կիրառում է թեստեր Quizizz և Learningapps առցանց գործիքների միջոցով: Օգտվում է ԿԳՄՄՆ կայքից,ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի բլոգից, կարողանում է գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը: Ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով ստեղծում է թվային առցանց առաջադրանքներ, շնորհադեմներ: Դասը պլանավորում է կիրառելով տարբեր արդյունավետ մեթոդներ և հնարներ, իրականացնում է շերտավորված ուսուցում, մշակում է տարբերակված առաջադրանքներ, կարևորում է սովորողների խրախուսումը, համընդհանուր ներառումը, արժեքային համակարգի ձևավորումը, հայրենասիրությունը: Ստեղծում է խթանող կրթական միջավայր, ստեղծարար աշխատանքային մթնոլորտ: Սովորողներին մղում է նոր գիտելիքների ուսումնասիրման: Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ: IX Ա, Բ, Գ դասարաններում «Աշխարհագրություն» ուս. առարկայից 2022թ. հոկտեմբերին տնօրենության կողմից անցկացված թեմատիկ ստուգման արդյունքում սովորողների որակական ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 20.83%, 25%, 13.04% , իսկ առաջադիմությունը՝ 91.7%, 75%, 78.3%:	1	1 /համատեղ/ տեսասա-հիկի կիրառում
---	------------	-----------------	---	---	-------------------------------------

10	Ուսուցիչ 10	Ֆիզկուլտուրա	2+5ՏՀՏ+5 մ/մ նախագահի կողմից իրականացված դասալսումներ Ուսուցիչը կարողանում է ստեղծել տեսասահիկ, կիրառել էլեկտրոնային պատրաստի ուսումնական նյութեր՝ դասը ավելի գրավիչ դարձնելու նպատակով: Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ: Կիրառում է գնահատման տարբեր ձևեր: Կարևորում է սովորողների արժեքային համակարգի ձևավորումն ու զարգացումը, հանդուրժողականությունը: Դասերը հիմնականում կազմակերպում է գործնական մեթոդով՝ խոսքային և զննական մեթոդների համակցմամբ:	1	1
11	Ուսուցիչ 11	մաթեմատիկա	4, որից 2տն. կողմից գրավ., 2ՏՀՏ+7 մ/մ նախագահի կողմից իրականացված դասալսումներ Ուսուցիչն ունի Gmail հաշիվ, կարողանում է գրել հաղորդագրություն, կցել ֆայլեր, պատասխանել նամակներին, Google Drive տիրույթում ստեղծել, տարածել ու պահպանել տեքստային ռեսուրսներ, կիրառել ՏՀՏ գործիքներ՝ դասը ավելի գրավիչ դարձնելու նպատակով/ Quizizz, Learningapps, wordwall/ : Ունի իր կողմից պատրաստված էլ. նյութեր: Օգտվում է ԿԳՄՍՆ կայքից, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿՁՆԱԿ-ի բլոգից, sovorir.am և khanacademy.org կայքերից, կարողանում է գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը: Դասը պլանավորում է կիրառելով տարբեր մեթոդներ և հնարներ, դիդակտիկ նյութեր, տարաբնույթ առաջադրանքներ, իրականացնում է շերտավորված ուսուցում, համընդհանուր ներառում: Իրականացնում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներ: VIII Ա դասարանում «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» ուս. առարկաներից 2022թ. դեկտեմբերին տնօրենության կողմից անցկացված թեմատիկ ստուգման արդյունքում սովորողների որակական ցուցանիշը համապատասխանաբար կազմել են 20.8%	1	1 տեսասահիկի կիրառում

Աշխատակազմի արժևորման, խրախուսման նպատակով 2018 թվականից մինչև 2022 թվականը աշխատակազմը խրախուսվել է պարբերաբար: Պարբերաբար խրախուսվել են աշխատակազմի բոլոր անդամները տարիների հետևյալ հարաբերակցությամբ.



Աշխատակազմի բացի վերոնշյալ խրախուսման ձևից, ամենամյա գրաֆիկով խրախուսվել են աշխատակազմի այն անդամները, ովքեր ունեցել են անհատական ձեռքբերումներ կամ իրենց աշակերտները և դպրոցն է ունեցել ձեռքբերումներ: Նման մոտեցումը պարբերաբար քննարկվել է դպրոցի կառավարման խորհրդի նիստերին, կառավարման խորհրդի անդամները արժևորելով աշխատակազմի կողմից կատարված աշխատանքները, այնուամենայնիվ առաջարկություն են ներկայացրել գնահատման չափանիշներ մշակել: Այդ իսկ պատճառով դպրոցը նպատակ է դրել կիրառել աշխատակազմի արժևորման և խրախուսման նոր գործիքներ:

/Տես էջ 145,146/

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Դպրոցում ներդրված է պարտադիր վերապատրաստում անցած ուսուցիչների մշտադիտարկման գործընթացը	1.Աշխատակազմի խրախուսումը կատարվել է հավասարության սկզբունքով
2.Պարտադիր վերապատրաստում անցած ուսուցիչները ունեն իրենց կատարած բոլոր աշխատանքները թղթային և էլեկտրոնային տարբերակով	2.Աշխատակազմի գնահատման, խրախուսման սանդղակներ չունենք
3. 2022 թվականից դպրոցում „Իմ ուսուցիչը“ նախագիծն է իրականացվում աշակերտների կողմից	3.Ներդրվել է միայն ստուգաթերթը, որը ընդհանուր է միայն պատկերացում տալիս
4.Ամբողջ աշխատակազմը տարին մեկ անգամ խրախուսվել է դրամական պարգևատրման միջոցով	4.Վարչական աշխատողների գնահատման սանդղակ չունենք
5.Խրախուսվել են տարբեր բնագավառներում հաջողություններ գրանցած աշխատողները	5. Պարտադիր վերապատրաստում անցած ուսուցիչների մշտադիտարկումը կատարվել է երկու ուսումնական տարիների համար միայն
6. Խրախուսվել են ինքնակրթությամբ, տարբեր նախագծերում մասնակցություն ունեցած ուսուցիչները	6.Համագործակցությունը մյուս դպրոցների ուսուցիչների հետ թույլ է
7.Աշակերտական խորհրդի կողմից „Ուսուցչի օրվան“ նվիրված միջոցառումներ են իրականանում	
8.„Ուսուցչի օրը“ շնորհակալագրով են պարգևատրվում ուսուցիչները	
9.Դպրոցի 55-ամյակին շնորհակալագրերով են պարգևատրվել բազմամյա վաստակ ունեցող ուսուցիչները, դպրոց են հրավիրվել և մեծարվել դպրոցի նախկին ուսուցիչները	
10. Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների կողմից կազմակերպվում են առաջավոր փորձի դասեր	
11.Տարակարգ ստացած, տարբեր մրցույթներում հաղթանակներ գրանցած ուսուցիչները ևս խրախուսվել են	

Վարչական աշխատողների գնահատման սանդղակ

1.Շատ արագ ընդունում է դժվար իրավիճակներում որոշումներ	7654321	1.Դժվար է ընդունում որոշում դժվար իրավիճակում
2.Որոշումներ կայացնելուց „այո” և „դեմ”-ը կշռադատում է	7654321	2.Որոշումներ է կայացնում առանց տվյալների սպառիչ հաշվարկի
3.Թույլ է տալիս ենթականերին նախաձեռնողականություն ցուցաբերել	7654321	3.Թույլ չի տալիս ենթականերին նախաձեռնողականություն ցուցաբերել
4.Անընդհատ շփվում է աշխատանք կատարողի հետ	7654321	4.Որպես կանոն տալիս է գրավոր հրամաններ
5.Ուշադիր հետևում է նորարարություններին	7654321	5.Ուշադրություն չի դարձնում նորարարություններին
6.Ուշադիր է ենթակաների նկատմանը	7654321	6.Անտարբեր է ենթակաների նկատմամբ
7.Փնտրում է տարբեր մեթոդներ՝ յուրաքանչյուր ենթակային մոտիվացնելու համար	7654321	7.Անտարբեր է ենթականերին չմոտիվացնելու դրդապատճառների նկատմամբ
8.Դժվարությունները հաղթահարելու ուղիներ է փնտրում, քանի դեռ խնդիրը չի լուծվել	7654321	8.Դժվարությունների դեպքում նախաձեռնողականություն չի ցուցաբերում

7-շատ բարձր աստիճան

6-բարձր աստիճան

5-միջինից բարձր

4-միջին

3-միջինից ցածր

2-ցածր

1-շատ ցածր

Աշխատակազմի գնահատման սանդղակ

Չափանիշ	Գ-գերազանց	ՇԼ-շատ լավ	ԱԲ-անհրաժեշտ է բարելավում	Ա-անբավարար	ԱՏ-ատեստավարված չէ
.Կատարված աշխատանքի ճշգրտությունը, մանրակրկտությունը, ընդունելությունը					
.Արտադրողականությունը՝ որոշակի ժամանակահատվածում կատարված աշխատանքի ծավալը և արդյունքը					
.Մասնագիտական գիտելիքներ՝ աշխատողների գործնական հմտությունները և գիտելիքները,որոնք օգտագործում են աշխատանքի ընթացքում					
.Հոսսալիություն՝ ինչքան կարելի է վստահել աշխատողներին առաջադրանքներ կատարելու համար					
.Ճշտապահության աստիճան՝ հանձնարարված աշխատանքի համապատասխան,ներքին կարգապահական կանոնների պահպանում					
.Անկախություն՝ աշխատանքի մի մասը,որը կատարվում է առանց վերահսկման					

9. ՈԼՈՐՏԸ՝ Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ

ՆՊԱՏԱԿԸ՝ Կիրառել աշխատակազմի արժևորման, խրախուսման նոր գործիքներ **ԽՆԴԻՐՆԵՐԸ՝**

- 1. Կիրառության մեջ դնել վարչական աշխատողների գնահատման նոր գործիք
- 2. Կիրառության մեջ դնել աշխատակազմի մյուս անդամների գնահատման նոր գործիք
- 3. Արժևորել աշխատակազմին

ՌԻՍԿԵՐԸ՝

- 1. Աշխատանքային տարածայնություններ
- 2. Սուբյեկտիվ կարծիքներ
- 3. Դիտավորություն տեսնել

ՌԻՍԿԵՐԻ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆՆ ԵՎ ԱՁԵՑՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- 1. Գործիքները կենսարկվեն փոքր աշխատանքային խմբերում
- 2. Անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել գնահատման գործիքում
- 3. Վարչական աշխատողների գնահատման գործիքները կգնահատվեն ոչ վարչական աշխատողների կողմից և հակառակը
- 4. Մասնակից դարձնել նաև աշակերտներին

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատու/կատարողներ	Ժամանակացույցը	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Հնարավոր ֆինանսական ծախսը	Վերահսկողներ
1. Ծարունակել կիրառել ուսուցիչների համար կազմված ստուգաթերթը	տնօրեն, տնօրենի տեղակալ, Մ/մ նախագահներ	2023-2028	Ստուգաթերթ		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ
2. Աշխատակազմին ներկայացնել վարչական աշխատողների գնահատման սանդղակը	աշխատակազմ	2023 -2028	Գնահատման սանդղակ՝ աշխատակիցների թվով	պետական բյուջե	Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ
3. Աշխատակազմին ներկայացնել աշխատակազմի գնահատման սանդղակը	տնօրեն, տնօրենի տեղակալ, համակարգող՝ կրթական աջակցությունների գծով, Մ/մ նախագահներ	2023-2028	Գնահատման սանդղակ՝ վարչական աշխատողների և Մ/մ նախագահների թվով	պետական բյուջե	Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ
4. Ծարունակել աշակերտական խորհրդի նախագիծը՝ „Իմ ուսուցիչը“	տնօրեն, տնօրենի տեղակալ, համակարգող՝ կրթական աջակցությունների, ԴԱԿ	2023-2028	տեսախցիկ, մոնիտոր		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ
5. Ծարունակել կատարել մշտադիտարկում պարտադիր վերապատրաստում անցած ուսուցիչների մոտ	տնօրեն, տնօրենի տեղակալ	2023-2028	ՆԴՎ/դասավորումներ, ուսումնասիրություներ, գրավորներ և այլն		Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ

1.10. Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Հանրակրթական ուսումնական հաստատությունում գործում էր ֆինանսավորման բանաձև, կախված սովորողների քանակից և ներառում է դպրոցի պահպանման ծախսերը: Կախված նրանից, թե քանի սովորող կա, սահմանվում էր որոշակի թիվ՝ մեկ աշակերտին ընկնող գումարի չափով, բազմապատկում են սովորողների թվով, գումարվում են պահպանման ծախսերը, և ստացվում է դպրոցի պետական ֆինանսավորումը: 2020-ից մինչև 2023 ֆինանսական տարիների ընթացքում դպրոցը չի ունենցել ֆինանսական խնդիրներ, թեև ունեցել ենք աշակերտների շարժ: 2020 թվականից ֆինանսական միջոցները 130741,200-ից հասել է 150381,000-ի:

2023-2024 ուսումնական տարուց սկսված ներդրվել է դասարան թվով ֆինանսավորումը: Անկախ ֆինանսավորման բանաձևից դպրոցներն իրավունք ունեն բացի պետական ֆինանսավորումից փորձել սնուցվել ֆինանսավորում օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Բացի այդ դպրոցը կարող է իրականացնել լրացուցիչ որևէ կրթական ծրագիր, մասնավորապես իրականացնել երկարօրյա ուսուցման կրթական ծրագիր, բացի հիմնական ծրագրից և ֆինանսավորում ստանալ պետական բյուջեից:

Մեր դպրոցը ֆինանսավորվում է հիմնականում պետական ֆինանսավորումից, բոլոր ծախսերը կատարվել են դպրոցի միջոցների հաշվին՝ հիմքում եղել է զարգացման ծրագրի կատարողականը: Սակայն կարողացել ենք նաև լրացուցիչ միջոցներ ձեռք բերել և լուծել մի շարք խնդիրներ:

Դպրոցի ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը ընթացիկ և վերջին երեք տարիների համար

ԾԱԽՍԵՐ	2020թ	2021	2022	2023	Փոփոխության դինամիկան/նվազում,աճ, անփոփոխ
Աշակերտների թիվ	816	837	825	837	աճ
Դրամական միջոցների ազատ մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	1344,0	3397,5	8975,1	2218,6	նվազում
Ընդամենը դրամական միջոցներ ներհոսքեր,այդ թվում սուբսիդիայից	130741,2	138234,7	143267,8	160613,4	աճ
Տարրական ընդհանուր կրթություն	51594,1	63621,9	64082,2	65465,8	աճ
Հիմնական ընդհանուր կրթություն	78440,9	73678,6	74716,3	84915,2	աճ
Ծանապարհածախս	350,0	380,0	450,	561,0	աճ
Դրամաշնորհից/տարակարգ կամավոր/	584,7	934,2	4157,1	9671.4	աճ
Ընդամենը դրամական միջոցների արտահոսքեր,այդ թվում	132085,2	141632,2	152242,9	162832,2	աճ
Աշխատավարձի և հավելավճարների գծով	111857,0	121795,8	125292,1	134761,4	աճ
Շարունակական ծախսերի գծով,որից`					
Էներգետիկ ծառայությունների գծով	6300,0	6234,0	6300,0	6300,0	անփոփոխ
Կոմունալ ծառայությունների գծով	566,0	356,0	454,0	454,0	անփոփոխ
Կապի ծառայությունների գծով	80,0	62,4	70,0	80,0	աճ
Ներքին գործողումների գծով	309,2	210,0	312,2	561,0	աճ
Համակարգչային ծառայությունների գծով	500,0	500,0	500,0	400,0	նվազում

Նյութեր և ապրանքներ/գրասենյակային, տնտեսական, շինանյութ	1200,0	1420,0	1300,0	1100,0	Նվազում
Վերապատրաստումներ		157,2	384,0	240,0	Նվազում
Կենցաղային և հանրային սննդի նյութեր				9403,6	
Մեքենաներ, սարքավորումներ, գույք համակարգիչներ, պրոեկտորներ	3396,0	2000,0	1600,0	1000,0	
Շենքերի և շինությունների կառուցում			14728,0		

Ուղևորական հաստատությունների նարդյունավետության հիմնական ցուցանիշները` ընթացիկ և նախորդ 2 տարիների համար

Ցուցանիշներ	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորող/ուղևորիչ հարաբերությունը (հաշվարկ հաստատություն սովորողների ընդհանուր թվի հարաբերություն ուղևորիչների ընդհանուր թվին)	18.5	19.3	19	19	Դիտվում է նվազում
Սովորող/սպասարկող անձնակազմ հարաբերությունը (հաշվարկ հաստատություն սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը սպասարկող անձնակազմի ընդհանուր թվին)	46.8	43.7	52	69	Դիտվում է աճ

